



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

3352

3353

3354

3355

3356

3357

28(075)

1866  
C-30



# ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Կ Ա Մ

ԵՂԾ ԱՂԱՆԴՈՅ ԳԷՈՐԳԱՅ ՇԻՇՄԱՆԵԱՆ

Բ Ա Ժ Ա Ն Ե Ա Լ

ՅԵՐԿՈՒՄ ՄԱՍՈՒՆՍ ԵՒ ՀԱՏՈՒՄԾՍ ՉՈՐՄ



Ա Ր Ս Ր


ԹԱԴԷՈՍ ՔԱՀԱՆԱՅ ՍԱԼԱԽՈՐԵԱՆՑ

Ա Տ Ա — Բ Ա Ջ Ա Ր Ց Ի



Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ի Չ

Մ Ի Բ Ա Յ Է Լ Կ. Ս Ա Ր Ը Ե Ա Ն



کتابخانه و چاپخانه

در مسقط جالان قیلردو

ՅՈՂԶԱՆՆԷՍ ԳՈՒԸՅԵԱՆ

Կ Ա Վ Ա Ջ Ա Ր - Կ. ՊՈԼԻՍ

H. KILIDJIAN

LIBRAIRE-ÉDITEUR

CONSTANTINOPLE

Կ. ՊՈԼԻՍ

ՑՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. Կ. ՍԱՐԸԵԱՆ

1882

Բարձրաշնորհ Սրբազան ՊԱՏՐԻԱՐԿ Հայոց Կ. Պօլսոյ և  
Նախագահ կրօնային պատկառելի Ասենի Տ. Տ. ՆՆԲՍԷՍ ա.  
ռաքելաշաւիչ Արքեպիսկոպոս վարժապետեան գորովադուլթ  
հոգեծնողն իմ ամենայն խոնարհութեամբ .

Առաքելաշնորհ Սրբազան Հայր ,

Զպակասութիւն՝ զթերութիւն և զանհոգ անանդումն  
հոգեկեցոյց ուսման՝ երկնատուր կրօնի Քրիստոնէական վար-  
դապետութեան , յԱզգային վարժարանաց և յեկեղեցեաց լը-  
րութեան Առքանազեանս Ազգին , տեղի տալ ետուն ցարդ՝  
յակզբանէ վեշտասաներորդ դարէ անտի, բաղմադիմի աղխա-  
ղուր խօթարանութեանց տգիտափառ իմաստակաց . յոյց սա-  
կըս . ո՛չ սակաւ վտանգեալ դփաւ քան ըզհիւսիսականս վե-  
հագոյն առձայնեալ՝ Աստուածատունկ զբխտիւն փառա-  
զարդեալ Ազգն և Աշխարհն Հայկական . . . :

Այն՝ որ երբեմն տամեքումբ չափ այլատարր լեզուաց  
և ազանց զողեսպահիլն զկաթ՝ բարոյականին կրօնի Քրիստո-  
եան , ջամբեալ գիեցուցանէր , այժմս՝ ամենեւիմբ պասքեալ  
գողցես , արդահատութեան խնամոց կարօտ տեսանի . . . :

Ըզմիութեանն վեհութիւն Արամեանս ազգի , քառեակ  
դէմս փեռեկեալ , մինչև անկրօնութեան բաշաղմամբ խենէշ-  
եալ . հնգերրորդիւն տեսակաւ բաժանել սպառնայ զարդիս  
անտարբերութիւն և տգիտութիւն ստուարամասնութեան ե-  
կեղեցականացս . . . :

Զառաջակայ գործոյդ շարժառիթ՝ որպէս տեսանի , է  
ո՞ւրա՛հ իմն նորոգ հրատարակեալ «Մկրտութիւն» վերտա-  
ռութեամբ , ստորագծեալ յանուն Քէորդայ Ն. Շիշմանեանի  
ուրումն նորեկելոյ Հակոսանէից աշխարհէ , գլխովին անձանօթ  
մերոյ : Յորում , յահուր և անպատկառ լեզուացորէ Երեմի  
կոկողալիզ ամբարտաւանութեամբ զուղլափառ եկեղեցի աղ-  
գիս մերոյ :

دستگاه چاپخانه  
ՅՈՒՆՆԵՄ ԳԵԼԵՅԱՆ  
ԳՐԱԳՍՏԱՌ . Ն. ՊՈԼՍՈ  
H. KILIDJIAN

489 1999 5 110000


10702 10000000 00 000000 000000

9 0 7 0

0000000000 000000 000000  
10702 000000 - 000

0110100000

000000 000000



2064  
40

000000 0

000000 000000 000000

0000

Կահաղելով զնոր իմն աղանդէ՛ գուն գործեալ ճգնի զբարտեւել և նախատել զմեզ ազգովին , յաղազս մկրտութեան առօրեայ մանկան ծնելոյ և այլն և այլն :

Վստահ յօգնականութիւն ՚ի թիկունս հասելոյ սրբոյ Հոգւոյն , ըղձակաթ օժանդակութեամբ սրբանուէր աղօթից ԱՐՀԻՍՓՍՈՒ ՎԵՂԻԳ , ձեռն ՚ի գործ արկաք ՚ի դիմի հարկանել . ո՛չ ՚ի պաշտպանութիւն մերս առաքելական սուրբ եկեղեցւոյ , որում չիք բնաւ կարօտութիւն , մասնաւոր թէ՛ անձեռնհաս իսկ գտանիմք տկար և ապիկար գոլով . այլ , յղղուշութիւն երիտասարդ պատանեկութեան ազգիս սիրելւոյ . որում և նուիրեմ հրատարակութեամբ , եթէ հրամայես . չիք բարձր հրամանաւ Ձերումդ բարձր . Սրբազնութեան . յանձն արարեալ ՚ի քննութիւն և ՚ի վաւերացումն սրբազումար ԺՈՂՈՅԻ ԿՐՕՆԱԿԱՆ :

Մնալով Առաքելաչնորհ Սրբազնութեան Ձերում ամենախոնարհ որդի :

ԹԱԴԻՍՍ ՔԱՀԱՆԱՅ ՍԱԼԱՌՈՐԵԱՆ  
Արքեպիսկոպոս

Ի թուականութեան Հայոց  
ՏՅՀԻ յԱմսեանն Սահմի ԻՐ  
յնկեղեցւոջ սրբոց Հրեշտակապետաց  
Պայատու

Կրօնային Ատենին ի քննութիւն .  
Պ. Կ. Ն.

4884 Նոյ. 7

Այս գործին քննութիւնը Կրօնային Ատենին Լուսինեան Գեր. Տ. Խորէն Սրբազանի յանձնուելով Նորին Գեր. Սրբազնութիւնն քննած և հետեւեալ վկայագրովն յԱզգ. Կրօն. Ատենին վերադարձուցած լինելով , Կրօն. պատ. Ատենան արտօնած է հրատարակութիւնը մասնաւոր մի նամակաւ , որն որ սոյն նամակէն ետքը կտեսնուի :

Գերապատիւ Տէր:

Ձյանձնեալն ինձ 'ի Կրօնային Ատենէն 'ի քննութիւն «ըզ-  
Հայկական եկեղեցի կամ Եղծ աղանդոյ Գէորգայ Շիշմանեան»  
զերկասիրութիւն Արժ Տ. Թադէոս քահանայի Սալախորեան  
ընթերցեալ՝ գտի զայն համաձայն վարդապետութեան Հայ-  
աստանեայցս սուրբ եկեղեցւոյ . և արժանի համարիմ տպա-  
գրութեան . 'ի խրախոյս Արժ. հեղինակին , որ եռանդեամբ  
պաշտպանէ զուղղափառ մերս դաւանութիւն , ընդդէմ՝ այնո-  
ցիկ որ բարուրանս զնովաւ համարձակին շիեղ , առ տղիտու-  
թեան կամ առ չարութեան :

Ո՞ճ բանից հեղինակին դիւրամատոյց գոլով ժողովրդա-  
կանաց օգտակար յոյժ կարէ լինել նոցա . զոր և մաղթեմ  
'ի սրտէ :

ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱՐ-ՊԷՅ ԼՈՒՍԻՆԵԱՆ

26 Ապրիլ 1882

'ի Պէշիկթաշ

Գեր. Տ. Տ. Սիմէօն Սրբազան Արքեպիսկոպոս Սէֆէրեան  
Կրօնային խորհրդական և այլն

'ի Կ. Պոլիս , Գում-գարու

Արժանապատիւ Սիրելի:

Ձեր սիրելութեան երկասիրած Հայկական եկեղեցի կամ  
Եղծ աղանդոյ Գէորգայ Շիշմանեան անուն տետրակին քնն-  
նութիւնը կատարած՝ և Հայաստանեայց Առաքելական Ս. ե-  
կեղեցւոյ վարդապետութեան համաձայն դատած լինելով՝ Կրօ-  
նային Ատեննն ԻՄԹՐԳ. նստին մէջ 14 Մայիս իւր իսկ հա-  
ւանութեամբ կարտօնէ անոր տպագրութիւնը :

Ձայս որոշում Կրօնային Ատենի ծանուցանելով Ձեզ :

Մնամք աղօթարար

Ի բացակայութեան Ամենապատիւ Սրբազան Պատրիարքի  
Փոխանորդ Նորին

ԳԷՈՐԳ Ծ. ՎԱՐԳ. ՐՈՒՍՃՈՒԳԼԵԱՆ

Կ. Պոլիս 7 Յունիս 1882

Առ

Արժ. Տ. Թադէոս քահանայ Սալախորեանց

Գրեթէ հինգերորդ դարէ անախ սկսեալ՝ Հայկական Ս. Եկեղեցին անընդհատ հալածանաց՝ եւ, թէ՛ իներքուստ եւ թէ՛ յարտաքուստ եղած անողոք յարձակմանց դէմ՝ անօրինակ համբերութեամբ՝ որպէս սին հաստատութեան, դիմացած ու կեցած է ամենագութ ողորմութեամբ՝ շնորհօք եւ մասնաւոր վերատեսչութեամբ Հոգւոյն Սրբոյ :

Այո՛, Հայ ազգն իւր քաղաքական իշխանութիւնը կորուսանելէ եւ ընդ ոլորտս արեղերաց թափառելով յԱսիա, յԵւրոպա, յԱմերիկա, յԱրարիա եւ ի սահմանս նոցին՝ առաւել կամ նուազ թուով, թըշուառութեամբ ընակութիւն հաստատելէ ետք, այսպէս իւր ամենատրկար մնացած ժամանակն իսկ գօրաւոր յարձակումներու դէմ իբր եղէզն ամրասպինդ կալով իւր ԲՈՒՆԻՆ վրայ, որ է նոյն ինքն Յիսուս Քրիստոս, սրահած է այն ՍՈՒՐԲ եւ ԱՆԲԻԾ ԿՐՕՆՆ ՔՐԻՍՏՈՆԵՍԿԱԿԱՆ, որոյ համար նրբէք եւ ամենեւին չէ խնայած ո՛չ աշխատանք, ո՛չ նիւթական հարստութիւն եւ ո՛չ արիւն . . . :

Մի եւ նոյն հալածանաց՝ թէեւ գիմակը լիօխած, բայց սակայն, նախնի ժամանակաց մէջ տեղի ունեցածներէն ոչ նուազ բուռն. սեւ յարձակմանց թատր եղած տեսանեմք զարդիս իսկ Քրիստոսի Ս. Եկեղեցին : Մանաւանդ մերս Հայկական Սուրբ, Առաքելական, Եկեղեցին Քրիստոսի :

Առաւելութիւն մ'ալ սա է, որ մինչդեռ առջի ժամանակներն ընդհանրապէս ոչ-քրիստոնեայ Ազգերէն՝ զուր ուրեք եւս Քրիստոնեայ Ազգերէն ի պատճառս դաւանաբանական խնդրոց կրէր եւ ընդունէր յարձակումնք անհնարինք. իսկ այժմ, սա ժ.թ.րդ լուսաւորեալ դարուս մէջ՝ բուն իսկ իբր Հայ, Հայ անունը կրողներէն ընդունել սկսած է այն յարձակումներն անխիղճ, որոցմէ մին ալ անսա Գեորգ Ն. Շիշմանեան Պարոն աւետարանիչն է, իւր «Մկրտութիւն» անուն տետրակաւն :

Այս անձը՝ որոյ հետ անձնական ներկայութեամբ ծանօթութիւն ունենալու դժբաղդութիւնը չեմք ունեցեր, ասէ թէ՛ Հայ Եկեղեցին ձգելով զՔրիստոս, մարդոց հետեւիլ ընտրած է : Թէ՛ անմեղ մանուկներն մկրտէ. որոնք դեռ հաւատալու կարողութիւնը չունին : Թէ՛ նորածին մը՝ ծնեալ ի մեղս վարդապետէ : Թէ՛ Հայաստանեայց Եկեղեցին չհաւատար որ Ս. դրքերն ինքնին կարող են փրկել դմարդ : Բ. Տիմօթ. Գ. գլուխ 15 համար : Թէ՛ ասոնց ամենուն համար աշխարհի



վրայ ծաղու առարկայ եւ ոտնակոխ եղած է թշնամիներէ : Թէ Հայ ազգը ազատ չէ (հոս բոլորովին ցնորական խօսի) որով եւ ամեն յառաջդիմական միջոցներէ դուրկ է, եւ այլն եւ այլն :

Ինչպէս յայտնի է պատուարժան ընթերցողաց՝ յառաջիկայ գործոյս շարժառիթն է եղած նախորդ սեպտեմբեր ամսոյն վերջերն հրատարակուած վերը յիշուած տետրակն : — Նկատելով արդի Հայ ազգայնոցս մանաւանդ Հայ երիտասարդութեան դէպ ի իւր կրօնն ունեցած ըմբռնումը, աշխատեցանք ըստ կարի, դիւրատար ոճ մը գործածել եւ այնպէս ընծայել լրութեան ազգիս Հայոց :

ՀԱՅՎԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ անուն գործոյս օժանդակ ընտրած եմք նախ Աստուածաշունչ Ս. գիրքն, եւ յետ այնորիկ Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչայ «Յանախապատումն» ազգային եւ եկեղեցական պատմութիւններն, Ներսէսի Շնորհաւոյ Ընդհանրականն, Լամբրոնացոյն Մեկնութիւն Ս. խորհրդոյ պատարադի. Մեծ-Մաշտոց : Հոգելոյ Տ. Միքայէլ վարդապետի Սալանթեանց եւ Արժանայիշատակ Կարապետ վարդապետի Շահաղարեանց (Հարց) կրօնագիտութիւնքն, Մատթոս Առնայեցիին, Գեր. Տ. Յովհաննէս վարդապետ Զօհրապեանի Աստուածաշունչ Ս. գրոց նախադրութիւններն եւ այլն :

Իսկ գալով անձնական վերաբերութեան, ո՛չ այլ ինչ սպասեմք, բայց միայն տեսնել, եթէ Հայկական սուրբ, մի, ընդհանրական եւ Առաքելական բաղմաշարչար եկեղեցոյ սիրասուն զաւակաց ընդունելութեանն՝ եւ ոչ ստոյտանացն արժանացած է աշխատասիրութիւնս բաւ այն լիցի : Եւ եթէ յոչ կամայս սպրդելով դտանիցի բանս ինչ թերակատարս, խնդրեմք, զայնս եւս՝ ներողամտաբար, մեր տգիտութեան տարով չ'մեղադրել զմեզ, զի ո՛չ եթէ մեր հմտութեան ըրուունքն էին որ զմեզ քաջալերեցին յայս գործ . ո՛չ, ո՛չ ամենեւին, զի գլխովին դուրկ եմք, այլ դէպ ի մեր սուրբ եկեղեցին ունեցած անհամեմատ ՍԷՐՆ եւ քահանայական սուսաւորութեան սրբազան կոչումն էր . յորոց բռնադատեալ ժտեցաք յայս գործ դժուարին :

Մնամք ժամանակին անաշտո դատաստանին . . .  
Տրուպն ի պաշտօնեայս եկեղեցոյն Քրիստոսի  
ԹԱԿԷՈՍ ՔԱՀԱՆԱՅ ՍԱԼԱՆՈՐԵԱՆՑ  
ԱՏԱՐԱԶԱՐՑԻ

1884 Հոկտ. 13, Կ. Պօլիս  
Պալատ Եկեղեցոջ  
Սրբոց Հրեշտակապետաց

### ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

### ՀԱՏՈՒԱԾ Ա.

« Գոր, ո՛վ Քաղանկոյ, խօսեցար՝ ք ի սիրտ  
Երուսաղէմի, եւ մեթեարեցէք զգա, զի մե  
եղև տառապանօր :  
Եսայ. Խ. գլուխ 2 Համար :

Եթէ զգուշացուցանիցէս անօրինին եւ ոչ դարձցի յանօրնութենէ եւ  
ի ճանապարհէ իւրմէ, անօրնն այն յանօրնութեան խրիւժ մեռցի.  
եւ զու գանձն քո ասլրեցուցես :  
Եղեկ. ԼԳ. գլուխ 9 Համար :

### ՍՈՒՐԲ ԳԻՐՔԵՐՆ ԿԱՐՈՂ ԵՆ ՄԻԱՅՆԱԿ ՓՐԿԵԼ ԶՄԱՐԿ

Քանի մը օրէրէ 'ի վեր հրապարակի վրայ նոր տետրակ մը տեսնուած է . « Քրիստոնեայ ազգերուն եւ ժողովուրդներուն մկրտութեան վարդապետութիւններն ու արարողութիւններն » անուամբ եւ « Աւեա տարանիչ Գէորգ Ն. Շիշմանեան » ստորագրեալ հեղինակութեամբ : Ընթերցաբ ուշադրութեամբ՝ դայդ տետրակ կրկին եւ երեքկին . եւ ահա ինչպէս 'ի ձեռնադրութեան առաջի ահաւորին Աստուծոյ եւ սուրբ եկեղեցոյ ուխտած եւ յանձն առած եմք « ամենայն պատրաստութեամբ առանց ձանձրանալոյ կալ 'ի պաշտօնն Աստուծոյ . եւ ոչ խախտել զգործ Աստուծոյ . . . որքան իցէ կարն իմ՝ պաշտել զնա զամենայն աւուրս կենաց իմոց՝ հետեւելով նմա (Քրիստոսի) եւ չուսուցանել զոք հակառակ պատուիրանացն Քրիստոսի եւ կանոնաց առաքելոց նորին եւ հրամանաց մարգարէիցն սրբոց, եւ խրատել զնոսա (զժողովուրդ տեառն) զգուշանայ յամենայն մեղաց » : Մայր Մաշտոց երես 257—258 : Մանաւանդ թէ՛ պարտականութիւնք յանձն առած եմք 'ի Հոգւոյն սրբոյ « խօսիլ համարձակութեամբ զկենդանաբար

խորհուրդ աւետեաց Աւետարանին . եւ սպասաւորել գործովք վերա-  
կացութեան եկեղեցւոյն Քրիստոսի , խօսելով զարժանն՝ զպիտանին  
եւ զհաճոյան (Աստուծոյ) 'ի ժամանակի . 'ի վառս եւ 'ի գովեստ Աստ-  
ուածութեան , եւ 'ի լրութիւն շինութեան կաթուղիկէ եկեղեցւոյ » :  
Անդ . երես 271 : Զնոյն կատարել փութամբ այժմ . ապաւինելով յԱստ-  
ուած . որպէս զի կարող լցեմք , եթէ ոչ բաւականապէս , գէթ ըստ  
մասին ասել , « ծառայք անպիտան էաք . զոր ինչ պարտն էր առ-  
նել , արարաք » : Տետրակին հեղինակն իւր յառաջաբանին մէջ յայտ-  
նապէս խոստովանի եւ հաւատայ թէ՛ « մէկ մարդ մը իր ընկերին ,  
եւ մէկ մարդ մը իր եղբօրը պիտի չսորվեցնէ ըսելով թէ Տէրը ճանչ-  
ցիր » : Երեմ . ԼԱ . գլ . 33 համար : Եւ այդ խօսք ըստ քմայ մեկնա-  
բանելով ասէ թէ՛ « սուրբ գիրքերն կարող են փրկուելու իմաստու-  
թիւնը սովորեցնել եւ Փրկել ԶՄԱՐԴ : Հաւատայ եւ խոստովանի թէ  
ներկայ դարուս մէջ ապրող Քրիստոնեայք՝ մանաւանդ Հայք , ունին  
իրենց մէջ յափշտակող դայեր՝ որք ոչ ինչայն զճօտ Քրիստոսի : Ա-  
ւասիկ իւր խօսքերն : « Այս գրքոյկը իմ սիրելի աղէիս կը նուիրեմ ,  
« չէ թէ խաղաղութիւն է քարոզող սուտանուն աղքատիբայ նմանելու ,  
« այլ , ընդհակառակն Եսայի մարգարէին պէս աղաղակ վերցնելու եւ  
« ըսելու համար « ո՛վ իմ ժողովուրդն , քու առաջնորդներդ քեզ զլխէ  
« կը հանեն , եւ քու՝ չաւիրներուդ ճամբան կը խանգարէն : Գ . գլ .  
« 12 համար : Եւ զի ես անձամբ գիտեմ որ իմ ժողովուրդս գիտու-  
« թիւն չունենալուն համար բնաջինջ եղաւ » . Ովս . Գ . գլ . 6 համար :  
« Կը փափաքիմ եւ կաղթեմ Աստուծոյ որ՝ քու դարաւոր թմբութե-  
« նէդ արթնանա . ՀՕՏԻՆ ԶԽՆԱՅՈՂ ԶԱՓՇՏԱԿՈՂ ԳԱՅԼԵՐՈՒ ՀԵՏԵՒԵ-  
« ԼԷՆ ԴԱԿՐԵԼՈՎ ԶԵՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԵՏԱՐԱՆԻՆ ՏՈՒՅՈՒՅԱԾ  
« ԵՒ ԵՆՈՐՀԱԾ գիտութեան բանալին քու օրինակներուդ չթողելով  
« ընդունիս ամենօրնեալ Փրկչին հրաւէրը որ՝ կըսէ « եկէք ինձի բո-  
« լոր յողանձ ու բեռնաւորներ » : Մատթ . ԺԱ . գլ . 28—30 համար :  
Բիտէ՞ք , յորո՞ց եւ յորո՞պիսեաց հետեւելէ դադրիլ հրամայէ այս նոր  
աւետարանիչն . Քրիստոսի Յիսուսի , ժամանակակից եւ յաջորդաց ,  
եւ զորս պիտի տեսնեմք քիչ մ'ետք : Աւասիկ աստ լրացաւ Պարոն Գ .  
Ն . Շիշմանեան աւետարանիչն յառաջաբանը : Յառաջաբան մը՝ որ հե-  
ղինակին հաւատքն , խոստովանութիւնն ու բուն համոզումն լինե-  
լով , կարեմք ասել , որ սա այս անձը հասկացնել կամի թէ՛ ՀԻՆ  
ԿՏԱԿԱՐԱՆԸ միայն (այո՞ , 'ի բաց առեալ զԱւետարանն . զի դեռ ամ-  
բողջապէս դրուած չէր յոյնժամ : 'ի ժամանակս Ներոնի կայսեր Հը-  
ուովմայ . երբ առաքեալն Պողոս առ Տիմոթէոս գրեք ասելով « որ կա-  
րող են իմաստուն առնել զքեզ 'ի փրկութիւն » : Ի բաց առեալ ըզ  
թուղթ գործոց առաքելոց եւ զընդհանրական եւ մասնաւոր նամակա-  
նիս առ ընդհանուր եկեղեցիս հաւատացելոց ուղղեալ . սրոց քանի-

նեքն ալ դեռ դրուած չէին : Զի ինչպէս ինքն ալ խոստովանի նոր  
աւետարանիչն յառաջաբանութեան իւրում : առաքելոց ժամանակ  
յարեան այո՞ , Բրիստոսեանք , Կեփայեանք , Պողոսեանք , եւ Ապո-  
ղոսեանք : Մանաւանդ ելան այնպիսիք եւս որք զառաքեալս նեղը  
ձգեցին եւ իրենց մուրուրիւնը պաշտպանեցին , ինչպէս գրէ Պողոս  
առաքեալ առ Տիմոթէոս Բ . թուղթ գլ . Գ . 14 Համար ասելով « Աղեկ-  
սանդրոս դարբին բազում չարչարանս եցոյց ինձ , հատուցէ նմա Տէր  
ըստ գործս նորա , յորմէ եւ դու անձնապահ լինիջիր , զի շատ հա-  
կառակ եկաց բանից մերոց : Այս խօսքերէն բացորոշ տեսնուի որ ա-  
ռաքեալք այն աստիճան նեղը մնացել են Աղեկսանդրոսի առջեւ .  
մինչ զի , շին կարողացեր ըստ արժանւոյն պաշտպանել իւրեանց քարո-  
ղութիւն . եւ յորմէ (յԱղեկսանդրոսէ) զգուշանալ պատւիրէ նմա եւ .  
առաքեալն Պողոս : ) կարող էր ինքնին փրկել դմարդ Զի առանց մեկուժը  
կարօտելոյ , մարդ կարող է եղեր ըստ Գ . Ն . Շիշմանեանի , ինքնին  
եւ միայնակ ինքնին ընթեռնելով զգիրս սուրբս եւ փրկուել : Վասն զի  
ասէ « ով որ ուզէ ամենափոքր գնով մը կրնայ գնել զանոնք » . ի՞նչ  
ընելու համար գնելու է . փրկութեան համար ընթեռնելոյ : Եւ զմայե-  
լով յարէ . « եւ անա արդարեւ այս է այն երանելի ժամանակը մարդ  
մարդոյ , եղբայր եղբոր չսովորեցուցած ընթեռնուլ զսուրբ գիրս :  
Տետրակ երես Բ . Ասել կամի այս արտակեղրոն Պարոն Շիշմանեանն  
թէ՛ առանձին եւ ման միայնակ ընթեռնուլ եւ ապա անշուշտ իւր  
հասկացածին նման հաւատալ եւ պաշտել զԱստուած , եւ հասկացա-  
ծին հաւատացածին եւ պաշտածին համեմատ կրթել զսարազայս իւր .  
եւ եթէ Հարկը պահանջէ , հրապարակաւ քարոզել իւր հասկացածը  
պաշտածը եւ հաւատացածը . ինչպէս որ ըրին Պարոն Շիշմանեանի  
նախահարք , ('ի հաւատոյ դաւանութեան) Արիոս , Նեստոր , Մակե-  
դոն , Ապոզինար , Սաբել , Եւտիքէս , Լութեր , Կալվին եւ Զուինկ-  
լին եւ այլք շատեր մինչեւ մեր այս դար : Հա՞րկ է արդեօք յիշեցնել  
աստ որ Յիսուսի Քրիստոսի տեսան մերոյ յերկինս համբառնալէն հար-  
իւր յիսուն տարիներ՝ եւ գուցէ ալ աւելի , տակաւին որոշուած եւ  
վճռուած չէին նոր կտակարանի գրոց ընդունելի կամ սուրբ գրեանք  
լինելին : Եւ ըստ վիպայելոյ հոգելոյս տեսան Կարապետ վարդապետի  
հօր Շահնազարեանց՝ որ Եւսէբիոս չորրորդ դարու եկեղեցական պատ-  
միչ հօրէն քաղած է , ինչպէս որ Եւսեբիոս ալ Որոգինես եւ այլ Բ . եւ Գ  
դարերու պատմիչներէն . ասէ . « գոն երկու կամ երեք ցանկը , յորս  
« ո՛չ յիշատակին ոմանք 'ի սուրբ գրոց նորոյ կտակարանի » , որպէս  
« ՅԱՅՏՏՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ 'ի ցանկի ժողովոյն Լաւոտիկեայ (1) , եւ  
« սրբոյն Գրիգորի աստուածաբանի : Եւ մի թուղթ Յակովբու , եր-

(1) Այս ժողովն Քրիստոսի 364 թուին եղաւ սուրբ գրոց կա-  
նոնական կամ ոչ կանոնականներն որոշելու համար :

« կորին թուղթք Պետրոսի . եւ մի թուղթ Յովնանու 'ի ցանկին Մու-  
 « րատորեայ . այլ , այսմ պատճառ ոչ այլ ինչ է , բայց եթէ՝ որպէս  
 « գրեն Որսգինէս եւ Եւսեբիոս զի ընդ երկար ժամանակս յուղեցան  
 « զնոյցունց վէճք . առ Հարս սուրբ եկեղեցւոյ . . . զի 'ի ժամանակին  
 « յայնմիկ երեւեալ էին եւ երեւէին հետզհետէ բազմահատոր կեղծու-  
 « պատիր եւ ստայօղ շաղակրատութիւնք յանուն առաքելոց , որպէս  
 « Աւետարան մանկութեան Յիսուսի , Աւետարան Երբայեցւոց , Աւե-  
 « տարան Թովմայի , Աւետարան Պետրոսի , տօն Մարիամու եւ այլն ,  
 « եւ բազմաթիւ գործք առաքելոց , յուղ թուղթք , եւ յուղվագոյն եւս  
 « յայնտութիւնք տես զայսցանէ զմատեանն Յատրիկոսի անյայտից  
 « նորոյ կտակարանի » : Կրօնա. Տ. Կարապետ վ. ԵաՀնագրեանց ,  
 տպեալ 'ի Կ. Պօլիս 1869 » :

Աւելորդ չէ՛ ասել , մանաւանդ թէ՛ գիտնալ արժան է , զի այն  
 նախահարք Պարոն Գ. Շիշմանեանի դորս քիչ մը վերն յիշեցինք . սուրբ  
 գիրք ընթերցողներ եւ աստուածային բանի ուսուցիչներ էին Յիսուսի  
 Քրիստոսի սուրբ եկեղեցւոյն մէջ , որոնք անշուշտ Շիշմանեանի նման  
 իմաստուն եղած էին փրկուելոյ եւ ազատուելոյ համար 'ի ՓԱՌԱՅ ԱՐ-  
 ՔԱՅՈՒԹԵԱՆՆ ԵՆԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ . . . Եւ ինչպէս  
 ինքեանք փրկուելով ազատեցան Յիսուսի Քրիստոսի աստուածային  
 փարսախէն . ճիշդ սյալէս ալ զաշակերտեալս իւրեանց փրկեն ազա-  
 տեն Յիսուսի Քրիստոսի , եկեղեցւոյն ծոցէն եւ մատենն ուրիշ մի ոչ-  
 խարազգեստ գայլերու վոհմակապետի ձեռք . . . : Այդ նախահարք  
 Շիշմանեանի , 'ի Ս. գրոյ յառաջ բերէին փաստեր . « զՔրիստոս Աստ-  
 ուած եւ մարդ կատարեալ » չդաւանելոյ . . . : զհնուրթեամբն միանալ  
 'ի մարմնի Աստուծոյ բանին » չխոստովանելոյ . . . : զՆոզին Ս. Աստ-  
 ուած , ոչ համադրակից Հօր եւ Որդւոյ » , այլ արարած եւ ստացա-  
 կան դաւանելոյ . . . : « Չանձնաւորութիւն Ս. Երրորդութեանն ոչ երիս »  
 այլ , մի անձնաւորութիւն հաւատալոյ . . . եւ այլն եւ այլն : Կըրկ-  
 նեմք եւ ասեմք որ՝ ասոնց ամենն ալ Ս. գրոց յեցեալ փաստաբանէին  
 զաղանդս իւրեանց : Յուսամք որ հասկացաւ Պարոն Շիշմանեան զսուրբ  
 գիրս միայնակ ընթեռնելոյ եւ իւր հասկացածին համեմատ զԱստուած  
 պաշտելոյ դրութեամբ գէպի ո՛ւր առաջնորդուելնիս : Սակայն Պարոն  
 Շիշմանեան , ինքզինքնիս ենթադրեմք իբր առաջին դարու քրիստոն-  
 եայ եւ Աւետարանչայ ժամանակակից մարդ , ինչ պէտք էինք առ-  
 նել երբ ընդհանրապէս պատահէինք մութ եւ դժուարիմաց կէտե-  
 րու , որք նոր կտակարանին մէջ կան . մաւաւանդ թէ՛ ո՛վ որ , կամ  
 որո՞նք էին բազմաթիւ նոր կտակարանաց մէջէն միայն այժմեայ ձեռ-  
 քերնիս դանուածներն՝ որպէս ճշմարտապատում եւ սուրբ , որոշող  
 եւ վճառողներն . եթէ այժմեայ ձեռքերնիս դանուած Ս. գրոց կամ  
 գրաւոր աւանդութեանց մասին այդ քո յիշած մարդոց վկայութիւնք

այսպէս եւ այսքան պաշտելի է . ինչո՞ւ ուրեմն մի եւ նոյն սրբա-  
 զան անձանց մի ուրիշ վկայութիւնքն անարգելի լինի անգիր աւան-  
 դութեանց մասին . . . : Եթէ՛ ըստ գրելոյ Եւսեբեայ , սուրբն Իգնա-  
 տիոս եւ այլք , չյորդորէին զհաւատացեալս « հեռի մնալ յայլ ըստ  
 այլոյ կարծեայ հերետիկոսաց , եւ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՄՐ ՈՒՆԵԼ ԶԱՒԱՆ-  
 ԴՈՒԹԻՒՆՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ » . ինչ ընելու էին այն Քրիստոնեայք որ  
 դեռ նոր կտակարանն ամբողջապէս չունէին 'ի ձեռնին յայն ժամանակ  
 ինչպէս Յովնանու Աւետարանն , որ Քրիստոսի համարձմանէն ( ըստ  
 գրելոյ Որսգինեայ եւ Եւսեբեայ եւ այլոց բազմաց ) յիսուն երեք տա-  
 րիներ վերջը գրեց 'ի լեզու Յոյն : Սա պէս եւս յայտնութիւնք . որոյ  
 մէջ գործածուած կիրակէ բառը մի հաստատուն փաստ կարէ լինիլ  
 իւր գործոց ամենէն վերջինը լինելուն : Երրորդ դարուն սկիզբներն  
 դեռ սուրբ գրոց ցանկին մէջ անցած չէին որոշապէս Յակովբու եւ  
 Յուդայի թղթերն . Բ. եւ Գ. թղթերն Յովնանու : Տես յեկեղեցա-  
 կան սլատմութիւն Եւսեբեայ : Սուրբն Պօղիկրապոս՝ առաքելոցմէ ան-  
 միջապէս լսածն ու սովորածն աւանդեց քրիստոնէից ԲԱՆԻԻ ԲԵՐԱՆՈՅ :  
 Անդ՝ յեւեւր : Սուրբն Երանոս՝ Բ. դարուն վերջերն աւրող քրիստոն-  
 եայ մատենագիր . միայն սուրբ գիրք կարդալով ճշմարտութիւնն ու-  
 սանիլ ուզող քրիստոնէից գրէ . « որ ոք ըզձայ ուսանիլ զճշմարտու-  
 թիւն , տեսանել կարող է յամենայն եկեղեցւոյ ( ո՛չ թէ միմիայն 'ի  
 սուրբ գիրս ) զառաքելական աւանդութիւնս ընդ ամենայն աշխարհ  
 քարոզեալ » : Երանոսի Քրիստ. ընթերցմունք : Իսկ եգիպտացոս՝ ըստ  
 վկայելոյ Հօրն եկեղեցական սլատմութեան Եւսեբեայ . փոյթ անձին  
 կալաւ զաւանդութիւնս առաքելոց հաւաքել 'ի մի մատեան , յորոց  
 եւ զբազումս ամփոփեաց 'ի հինգ գիրս : Իսկ գալով Հայոց ազգիս  
 եւ աշխարհիս . ինչ ընելու էինք մեք , եթէ Թադէոս առաքեալ Հա-  
 յաստանի եւ բժիշկ եպիստոցելոյ Թագաւորին մերոյ Աբգարու եւ իւր  
 շախերան Աղղէ՛ նախապէս չքարոզէին զՅիսուս Քրիստոս եւ նորա  
 Հոգեկեցոյց խօսքերն իբր 32-49 : Եւ 33-37 փրկչական թուականնե-  
 րուն , եթէ՛ Յուդա Թադէոս 'ի մեծն Հայաստան յամեն տեառն  
 66-69 . եւ Եղիշէ առաքեալ՝ ձեռնադրեալ յերուսաղէմ , Աղուանից  
 եւ Հայոց աշխարհերուն մէջ չ'վարդապետէին եւ չ'աւետարանէին  
 զՅիսուսէ յամեն տեառն իբր 32-70 : Եթէ՛ չունենայինք Թադէոս  
 առաքեալ եւ Չաքարիա եպիսկոպոս աշակերտ Թադղէի առաքելոյն  
 'ի մեծն Հայաստան իբր 40-80 թուականին Քրիստոսի : Թէոփիլոս ա-  
 շակերտ Թադղէի 'ի փոքրն Հայաստան յաշխարհ կատարող վկացոց  
 'ի Կեսարիայ . եւ Կուսմի եպիսկոպոս՝ աշակերտ սրբոյն Բարդղիմ-  
 եայ 'ի մեծ Հայաստան 40-90 թիւ փրկչական : Եթէ՛ վերջապէս չու-  
 նենայինք Գողթան զաւառին եւ Սլենեաց աշխարհին մէջ Բաբելաս  
 եպիսկոպոս եւ անոր յաջորդ Զոթիկոս եպիսկոպոս , եւ թանսահատի

վանայ Մխիթար եպիսկոպոս եւ այլք շատ, զանազան տեղեր ու երկիրներ ամբողջ Հայաստանի մէջ (ի՞նչ պիտի ընէին այն քրիստոնեայք որք ինչպէս յայտ է, դեռ սուրբ գիրք չունէին ձեռնարկին) որք կենդանի բառաբանով վերապատմեցին զբանն ճշմարտութեան, որոյ մէջէն խիստ շատեր 'ի Քրիստոսէ շած եւ յառաքելոց անտի նորա ուսած վարդապետեցին Հայաստանեայցս Ս. եկեղեցւոյ. մեկնարանելով ըզդժուարիմաց բանս սուրբ գրոց. Զորոց տեսցէս « յեկեղեցական սլառ մութիւնն Կւսեբեայ, 'ի պատմութիւն Հայոց. 'ի վարս սրբոց, յայսմաւուրս մեր. 'ի սլատմութիւն Ագաթանգեղեայ » եւ այլն : Եթէ 'ի վեր անդր նշանակեալ առաքելաք, աշակերտք, հայրապետք եւ վարդապետք չըլլային ի՞նչ պիտի ընէինք պարոն Շիշմանեան : « Բայց անոնք մարդ էին, եւ մեք պէտք չէ որ մարդոց սլատուիրած բաներն ու վարդապետութիւններն սովորնք » . պատասխանը յեղեղէ միշտ : Սակայն ներեցէք պարոն Շիշմանեան, որ ասեմք. թէ որ անոնք թէ բանիւ բերանոյ եւ թէ գրով ամենայն հաւատարմութեամբ աւանդած չըլլային ի՞նչ որ ցարդ պահած է ընդհանուր եկեղեցին Քրիստոսի կարելի չէր եւ ո՛չ իսկ դոյ ըլլալ ո՛չ քրիստոնէական կրօն եւ ո՛չ կըրօնական մատեններ. զի նոքա տքնեցան բանիւ եւ սրգեամբք առ մեզ հասցունել (դուն ուրէք գրով) այն պատուական աւանդը՝ կրօնը. որոյ համար խոշտանգանօք նահատակեցան ե՛ւ առաքելաք ե՛ւ աշակերտք : Ի՞նչ եղան 'ի վեր անդր նշանակեալ գրոց՝ սուրբ գիրք ըլլալնին չհաստատուած մեռնող բաղմաթիւ հաւատացեալք Քրիստոսի. վասն զի՝ այդ ժամանակի քրիստոնեայք ինչպէս տեսանք, սուրբ գիրք ամբողջապէս չունէին 'ի ձեռին, որպէս զի՝ ըստ քո Հակոսնէական վարդապետութեան « միայն սուրբ գիրքերն ընթեռնելով փրկուէին » . . . :

Կարծեմք հասկացաք պարոն Շիշմանեան դարձեալ թէ՛ մեր պիտի առաջնորդուէինք ձեր գրութեամբ : Ուստի թողլով քու այդ քարոզներդ՝ հետեւէ մեզ : Մեզ որ՝ պարտիմք ըստ Պօղոսի առաքելոյն՝ չէ՛ թէ միայն գրեալ աւանդութեամբք փրկութիւն հաւատալ, այլ եւ. « եւ զոր լուարն յինէն բազում վկայիւք՝ զայն աւանդեսցէս հաւատարիմ մարդոց, որք բաւական իցէն եւ զայս ուսուցանել » : Տիմօթ. թուղթ Բ. Գլ. Բ. համար 2 : « Ունիցիս օրինակ ողջմտութեան բանիցն՝ ԶՈՐՍ ՅԻՆԷՆ ԼՈՒՍՐ, հաւատովք եւ սիրով որ 'ի Քրիստոս Յիսուս : Զբարեօք աւանդն պահեսջիր : Անդ Ա. Գլ. 13-14 համար. եւ այլ ուրիշ շատ տեղեր » . ասոնցմով, այսինքն առաքելոյն ստէպ յիշած աւանդութեամբն : Որ ուրիշ բան չէ. այլ բուն յառաջին դարէ անտի սկսեալ Քրիստոսի ընդհանրական եկեղեցւոյն ամենայն զգուշութեամբ մինչեւ հիմայ պահած աւանդութիւնն է. որով միայն կարելի է. սուրբ գրեանց ինչ ինչ մութ եւ դժուարիմաց խօսքերն լմանալ. եւ 'ի սուրբ գիրք չ'իշխատակուած կամ որ եւ է կեր-

պիւ չ'բացատրուած պաշտամանց եւ արարողութեանց վրայով տեղեկութիւն տոնուլ : « Մեր փրկութիւնը սուրբ գիրքերն կարողալով միայն կարելի է » ասէ ասնոր աւետարանիչն. վասն զի, « սուրբ գիրքերը կրնան իմաստուն ընել փրկուելու » : Տիմօթ. Բ. թուղթ Գ. Գլ. 13 համար : Աս այս ի՞նչ ասեմք : Ո՞վ ճանչցուց քեզ որ այդ չորս աւետարանները բուն Քրիստոսի առաքեալներն կամ անոնց գործակիցներն գրեր են. միթէ՞ ունի՞ս վաստս ի սուրբ գրոց, յառաջ քեր զայնս : Իսկ եթէ չունիս, որ այնպէս է, էր ուրեմն թշնամանեալ այն մարդիկներն, որք հոգւով սրբով լցեալ որոշեցին ճշմարտոր սուտէն : եւ անխորդախը խորդակեալէն, եւ համայն աշխարհի կ'տակեցին, Միթէ՞ անոնք, որք կարացան սուրբ Հոգւոյն զօրութեամբն՝ գրուածն երևն որոշել. ախարացմն անգիրներն որոշելու առեն : Ասեմք, թէ մեղքն առաքելոց վիղը ըլլայ, որ փոխանակ անդադար քարոզելու եւ բռնիւ բերանոյ աւանդելու՝ զԱստուած պաշտելոյ եւ նմա միայն երկիրպագանելոյ ձեւերն ու արարողութիւններն սորվեցնելոյ, (որով վարէին նախնի քրիստոնեայք մինչ 'ի չորրորդ դար, եւ անտի 'ի գիրք արձանացուցեալ մինչ մեր այս դար.) ըլլորն ալ գրի չեն առեր. որք կարող էին ստուար հատորներ գրել եւ այնպէս ամենայն ինչ գրով աւանդել մեզ : Եւ սակայն ինչէ՞ն գիտնայինք, որ ատոնք առաքելոց ձեռօք գրուեր են : Եթէ « պարոն աւետարանիչ » եթէ ասեմք. յանուն առաքելոց, մեծահատոր գրեանք ցարդ կեցած լինէին, ի՞նչ պէս եւ ո՞րով կարելի էր ստուգել. բայց եթէ առաջին գարունն աւանդէն մօտ եղող հաւատարիմ վկայից վկայութեամբն. որոց մէջէն մէկ քանին տեսանք, Եւ եթէ առաքեալներէն մի այդպիսի բան պահանջէինք. միթէ չպիտի սլատասխանէին ասելով. եթէ չորեքին Աւետարանիչք եւ մեր եւ մեր յաջորդներն, մեր ամենուս 'ի Քրիստոսէ լսածնիս եւ մեր ալ քարոզածներնիս գրել ձեռնարկէինք առանց բացառութեան, պաշտամանց եւ արարողութեանց ձեւերովն ու խրատներովն. թէ՛ մեր կեանքը չէր բաւեր : Թէ՛ թուղթ եւ մեղան անկարելի պիտի ըլլար բաւականացնել. եւ թէ՛, որ աւելի մեծն է, կայծակի արագութեամբ ընդ ոլորտս արեղերաց մեր միջոցաւ քարոզուած եւ ընդունուած ճշմարտութիւններն դարե՛ր պէտք պիտի ըլլային զնոյնս զբարե կերպով աւանդելու եւ քարոզելու : Միթէ, պիտի ասեն. Անդրէաս ու Փիլիսոպոս, Բարդուղիմէոս եւ Թովմաս, Մատթիա եւ Անանիա եւ այլք որոց եւ ո՛չ միոյն գրուածքներն հրապարակի վրայ չկան. միթէ մեզ նման չքարոզեցին՞ զբանն կենաց. չսովորեցուցին պաշտել զԱստուած կենդանի եւ երկրպագել Տեառնն Յիսուսի այլովքն հանդերձ : Ո՞ւր են մնացել սոցա եւ նմանեաց քարոզած ճշմարտութեանց պահարանը կամ գիրքերն : Ընդհանուր եկեղեցին Քրիստոսի պահած է իւր մէջ անոնց բաղմաթիւ ասացուածոց եւ արարող

2064

սուրբ մատուցներն ինչպէս նաեւ ընդհանուր առաքելոց եւ աշակերտաց վիսայական մահուն պատմութիւններն : Բայց « մեզ չէ՛ արժան ուսանիլ զվարդապետութիւնս մարդկան պատուիրեալս . » պիտի պատասխանէ Շիշմանեան պարոն աւետարանիչն :

Վա՛յ. ուրեմն առաքելոց եւ իւրեանց ձեռնասուն աշակերտաց (որոց մէջէն մէկ քանին տեսանք) որ այսպէս պատճառ եղբր են 1849 տարիներէ ի վեր շատ մը ազգերու կորստեան : Ի՞նչ պատասխան պիտի տան Քրիստոսի , որ այսպէս զՀայս , եւ ընդ նոսին զԱղուանս , զՎիրս , զԱսորիս , զԾողէս , զՃիղբս , զՀոնս , զԼբնիս , զԳամիրս եւ զԱրապատականս հանդերձ այլովք , մոլորեցուցեր են , եւ իրենց՝ որք « մարդ » էին , վարդապետութիւններն ուսուցեր են : Երանի՛ թէ ծընած անգամ չըլլային . . . :

Զի Աստուածամարդն Յիսուս Քրիստոս ասէ , « բայց վա՛յ մարդայն այնորիկ յոր ձեռն դայցէ գայթակղութիւն » : Զի՞նչ ասացորք ուրեմն պարոն Շիշմանեան . . . : Ես աւետարանիչ եմ Ամերիկայի « Քրիստոսի աշակերտաց կողմանէ զրկուած , ինձ մտիկ ըրէք . եւ ինչ որ ես ասեմ եւ պատուիրեմ ձեզ , արարէք . լսեցէք ուրեմն տետրիս 1354 երեսին մէջ գրածս , « Լուսաւորչական եկեղեցին թէ եւ համաձայն կերեւի Ս. գրոց ճշմարտութեանցը հետ , սակայն անոնց վրայ այնքան աւելորդ բաներ աւելցուցեր է , որ ճշմարտութեան շուքը միայն մնացեր է այդ եկեղեցւոյն մէջ . մարդոց բաները վարդապետութիւն սորվեցնելով . . . ուստի ամեն ինչ որ կայ այդ եկեղեցւոյն մէջ , թէ պատուէր » (ասել կամի այսոյէս , սիրեցէս զՏէր Աստուած քո , սիրեցէս զընկեր քո իբրև զանձն քո . մի՛ գողանար , մի՛ շնար , մի՛ սուտ վկայեր եւ այլն) « թէ՛ արարողութիւն » (այսինքն , ապաշխարութիւն , մկրտութիւն , գրոշմ՝ հաղորդութիւն , ձեռնադրութիւն եւ այլն) եւ թէ՛ զարդ (թերեւս ասել կամի Յիսուսի Քրիստոսի տեառն Ս. Խաչին նշանն , Աքդարու՝ Հայոց առաջին քրիստոնեայ թագաւորին , ի Քրիստոսէ ընդունած սուրբ Դասառաւին , զորմէ տես « Աերուբնայ Ասորի » ժամանակակից պատմիչ <sup>(\*)</sup> . Խորհրդատետր կամ Պատարագամատոյց սուրբ առաքելոյն Յակովբայ , Կանոնք առաքելական , Հուստատեք 'ի մի Աստուած եւ այլն . շարաթին առաջին՝ ու չեթէ եօթներորդ , օրը սրբել : Արքայաշտութեան ատեն զքահանայն եկեղեցական մասնաւոր զգեստով մը զգեստաւորել) եւ այլններն

(\*) Այս պատմիչն , մեր Աքդար թագաւորին անձամբ ինքն ի Ս. Երուսաղեմ չերթալուն՝ քաղաքական պատճառ մը յառաջ բերած է ըսելով « Կամեցաւ ինքն երթալ ի Պաղեստին , զի աչօք խրովք տեսցէ զՅիսուս եւ զամենայն սրբանչելիսն զոր անէր . եւ վասն զի չէր իւր իշխանութիւն աշխարհին Հոսովնայեցոց՝ ընդ որ ինքն երթալոց էր , զսեղի կալաւ . զի մի՛ պատճառք ինչ լինիցին թշնամութեան եւ այլն » :

ալ թերեւս մտքէ ելած սեպելով՝ հարկ համարեցինք աստ յիշել որպէս զի դուրսը բան մը չմնայ : Ասոնց ամենուն համար ասէ պարոն Շիշմանեան « որ ո՛չ Քրիստոս Յիսուս մեր Տէրը հրամայեց , եւ ո՛չ առաքելալք կատարեցին կամ քարոզեցին » տետրակ երես 13 . ասոնց բոլորին համար ալ « մարդոց պատուիրած բաներ են » ասէ « եւ անոնց հետեւողներուն պաշտամանց համար ալ Ամենօրհնեալ Փրկիչն կրտէթէ՛ պարապ տեղը զիս կ'պաշտեն » եւ կնքէ իւր բան ասելով . « քանի որ աչք դոցած է մեր ազգը Քրիստոսի եկեղեցւոյն մէջ օտար արարողութեանց սպրդելուն (ոյ՞ք են եւ քանի՞) եւ աւելորդապաշտութեանց (ցուցնելու էր) որոնք բոլորովին հակառակ են առաքելոց սորվեցուցած եւ աւանդած ուղմախ վարդապետութեանց » (որոց գոյութիւնը ինքը կա՛մ կամաւ եւ կա՛մ տգիտութեամբ ուրանայ անդ երես 13) « հոգեւորապէս մեռած պիտի մնայ » : Տետր 20 երես : Բայց թող ներուի մեզ պարոն Շիշմանեան . Աստուածամարդն Յիսուս Քրիստոս էր որ ասաց « Ես երթամ եւ առաքեմ ձեզ ԶՃՈԳԻՆ ՃՄԱՐՏՈՒԹԵԱՆ , ՆԱ Ուսուցէ ձեզ զամենայն » . մի՛ դուցէ ստած լինի , (հաղոր անգամ քաւ լիցի մեզ) եւ միայն այն առաքելոց զրկած ըլլայ ըզ սուրբ Հոգին , որոնց որ թղթերն այսօր հրապարակին վրայ կան . եւ որոց մէջէն միայն մէկ թուղթ ունիմք Հայաստան դնացող երեք առաքեալներէն միայն , Յուդա Թագէտոն : գրուած : Եթէ ասէք , ո՛չ , անոնց ամենուն ալ զրկեց , քանզի Աիծն վերնատան մէջ սպասլին . եւ նորա եւս ընդունեցին ըզ սուրբ Հոգին : Ուրեմն ի՞նչու գրով չաւանդեցին կամ չքարոզեցին Հայաստան աշխարհին , եւ բանիւ միայն վարդապետեցին . որպէս զի տասն եւ ինն դարերէ հաքն՝ սուրբ զիրքերն կրնան իմաստուն ընել փրկուելու խօսքին դրապէս Հակառակած չըլլային : Ասկայն այդպէս չէ՛ . սրբազան առաքեալք զիտէին իրենց սրբազան պաշտօնակիցին՝ Պօղոս առաքելոյն այդ խօսքն . որ ձեր հասկցածին պէս չէ , եւ անկարելի է որ այդպէս ալ ըլլայ : Պօղոսի յիշած « սուրբ զրքերն » չէ՛ թէ նոր կտակարանին՝ այլ , հին կտակարանին միայն եւ եթ վերարեւելին : Մանաւանդ որ Պօղոս սրբազան առաքեալն ալ տղէտ չէր . եւ զիտեր որ իւր պաշտօնակցաց շատերն դեռ գրիչ բռնած չէին բանիւ աւանդածին՝ գրով ալ աւանդելու . ինչպէս Պետրոս եւ Յովհաննէս : Պետրոս սրբազան առաքեալն Բ. թղթին մէջ այսպէս գրէ . « զոր օրինակ եւ սիրելի եղբայրն մեր Պօղոս , ըստ շնորհելոյ իմաստ « տութեանն նմա յԱստուծոյ՝ գրեաց ձեզ . որպէս եւ ՅԱՄԵՆԱՅՆ « ԹՈՒՂԹՍՆ խօսի վասն այսոցիկ , յորս գտանին ինչ ինչ գժուարիւ « մաց (բանս) զոր անուամուսնքն եւ յողորդքն կամակորեն , որպէս « եւ զամենայն իսկ զիրս առ իւրեանց անձանցն կորուստ » : ԳԼ Գ . համար 13-19 : Պետրոս սրբազան առաքեալն՝ անշուշտ Պօղոս Ս. առաքելոյն ԲՈՒՈՐ ԹՂԹՈՑ ծանօթ . այսոյէս գրէ : Ուրիկէ յայտնապէս

տեսանի թէ՛ Պօղոսի գրած ժամանակ Պետրոսի Բ. թուղթ չկայր ի միջի : Պօղոս սրբազան առաքելոյն վկայականն համ մարտիրոսական մահուան թուականն էր , Փրչական 69 թիւն . ըստ վկայելոյ Եւսեբեայ յԵկեղեցական պատմութեան իւրում , եւ Ներոնի կայսրութեան երեքաասաներորդ տարին : Սա այս՝ Ներոն կայսրն ինչ ինչ պատճառներով Ազրիպայինա իւր մայրն եւ իւր հօրաքոյրն եւ իւր կենն Հոկտավիա սղաննեց . ինչպէս նաեւ զքաղաքն յազգականաց իւրոց : Այս ժամանակին էր , որ Ներոն բոլորովին մոլեգնեալ՝ ընդհանուր հալածանք հանելով քրիստոնէից դէմ , մտաբերեց նոյն իսկ քրիստոնէական կրօնի քարոզիչներն ջնջել . եւ զՊօղոս՝ որ ի բանախ էր , գրէխատել տուաւ : Սոյն թուականէն ՏԱՍՆ ԵՒ ԵԹԹ ՏԱՐԻՆԵՐ անցնելէ վերջը , այսինքն Փրկչական 86 թուականին դրեց Յովմանէս Աստուածաբան աւետարանիչ իւր Ս. Աւետարանը , ինչպէս նաեւ Բ. Գ. ընդհանրական թղթերն եւ Յայսնութիւնն : Ապաքէն ինչպէս կարելի էր այդ վերոյիշեալ գիրքերն եւ ուրիշներն՝ որք դեռ գրուած ու հրատարակուած չէին , իբր միջոց փրկութեան իւր ժողովրդեան ներկայացնել Պօղոս ըսելով « սուրբ գրքերն կարող են զքեզ իմաստուն ընել փրկուելու » : Երրոնակեմք : Եթէ ասեմք , սուրբ գիրքերն (հին կտակարանք) կարող էին փրկել զմարդ , ինչու համար աշխարհ գալու էր Բանն Աստուած . ինչու մարմնառութիւն . . . եւ ինչու այդչափ նախատինք եւ չարչարանք Աստուածամարդոյն Քրիստոսի , եւ այլն եւ այլն : Եեսանե՞ս պարոն Շիշմանեան . քս այդ վարդապետութիւն դէպի ուր տանի դքեղ եւ քեզ լսող ու հետեւողներն . . . Կրնա՞ս եւ կարող ես հաստատել բացի մի քանի իրիստ թուաւոր առաքելոցմէ եւ յաշակերտաց , որոց համար նոր կտակարանի մէջ յիշուած են զսուրբ Հոգին ընդունելին (\*), սրբազան առաքելոց գործակցաց երկոցանց . սարկաւադաց եւ այլն համար թէ՛ եւ նոքա եւս ընդունեցին զսուրբ Հոգին : Եթէ չես կարող ցոյցնել , ուրեմն ընդունիս՝ եւ հաւատաս որ՝ այո՛ , աղօթիւք եւ ձեռնադրութեամբ սրբազան առաքելոցն եւ աշակերտացն ընդունեցին զսուրբ Հոգին՝ ի վեր անդր նշանակեալ Հայտնտանեայց սուրբ եւ առաքելական եկեղեցւոյն վարդապետութիւններն ալ . աշակերտք անմիջական առաքելոցն Քրիստոսի եւ աշակերտաց նոցին : Արք արեամբ չափ նահատակեալ ուսուցին մեզ զբանն ճշմարտութեան՝ եւ բանիւք՝ եւ գրովք եւ արդեամբք , եւ զորս ցարդ անյեղի պահած է Հայատտանեայց սուրբ եկեղեցին : Այս Ս. եկեղեցին տանն եւ ինն դարերու եւ ստուարխումբ տարիներու հոլովմամբ իսկ բնաւ չէ հեռացեր Յիսուսի եւ առաքելոց աւանդած Ս. Կրօնէն . եւ բնաւ չպիտի խտորի ունենալով զսուրբ Հոգին միակ առաջնորդ :

(\* ) Գործոց Բ. Գլ. 17 համար : ԺԹ. Գլ. 6 համար եւ այլուր :

Հ Ա Տ Ո Ւ Ա Մ Բ .

ԲԱՆ ՅԱՂԱԳՍ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԿԱՄ ՎԵՐՍՄԻՆ ԵՆԵԳԵԱՆ

Պարոն Շիշմանեանի հեղինակած գրքոյկին ճակատը գրուած սա խօսքերուն « թէ՛ որ մէկ մարդ մը ՋՈՒՐԻՆ ու ՀՈԳԻՆ չճանի , չը կրնար Աստուծոյ թագաւորութեանը մասնը » : Եթէ պարզամիտ ընթերցողք աննան , պիտի ասեն , ահա բուն Քրիստոսի խօսքերն են , եւ « ջուր » ու « հոգի » բառերն խոշոր գրերով գրօջմեալ են . ուստի այս գրքոյկը ուղղափառական է եւ յԱստուածուստ ներշնչեալ մէկէ մը հեղինակուած , ուստի եւ զնեմք զայն եւ ընթեռնելով հետեւիմք նմա : Մանաւանդ զի , մեր ուղածին պէս աշխարհիկ լեզուաւ զըրուած է : Բայց կնց սիրելի ընթերցող , այդ « գրքոյկին » ճակատը զըրօջմեալ խօսքերէն միայն չգնահատեմք զայն . զի այդ Պարոն Շիշմանեան իւր « տետրակին » 71րդ երեսին մէջ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԵԼ քրիստոնէական « անհրաժեշտ պարտաւորութիւն » միայն դաւանի . ինչպէս քրիստոնեայ մէկը ունի տեսակ տեսակ անհրաժեշտ պարտաւորութիւններ . զոր օրինակ « բարի առնել թնամեաց եւ անոնց համար աղօթք ընել եւ ինչ » Զմկրտուած մէկը մէկդէ՛ ազատ դաւանելով Հայոց եկեղեցւոյն զերախայս մկրտելն հեգնաբար նկարագրէ : Հաւատք յոյս եւ սէր չգիտցող եւ ասոնց վրայ տակաւին զազափար չունեցողն մկրտելու գրութիւնը նոր օրինակ ոճով մը դատապարտել կամի ասելով անդ երես 14 : « Մկրտուողն ունենալու է հաւատք , յոյս , սէր , « այս կերպով յարմարութիւն կրնայ ունենալ մկրտուելու . . . այս « կերպով յարութիւն կառնէ կենաց նորոգութեան մէջ յալելու » « այս կերպով կը սրբուի , կը մաքրուի եւ կ'ապրի » : Թէ՛ « մկրտու « թիւնը « նշան » եւ « կնիք » միայն է » եւ « այս դաւանութիւնը աւել « լի համաձայն է Ս. գրոց ճշմարտութեան » . անդ երես 73-74 : « Մեր « փրկութեան վերաբերեալ ինչ որ յայտնուած է Ս. գրոց մէջ , բո « լորն ալ « այնքան պարզ եւ դիւրեմաց » են որ՝ ( հակառակ Պօղոս « առաքելոյն վկայութեան ) բոլոր մարդիկ կրնան հասկնալ . եթէ սչ « ( ուղղիր եղիր հետեւեալ խօսքերուն ) ԱՍՏՈՒՄ ՊԱՏՄԱՆԱՆԱՏՈՒ « ԶՊԵՏԻ ՀԱՄԱՐԻ ԶՄԵՋ ՄԵՐ ԶԻ ՀԱՍԿՑԱԾՆ ԶԻ ԿԱՏԱՐԵԼՆՈՒՄ ՀԱ « ՄԱՐ . եւ քանի որ բոլոր մեր քննութիւններն , եւ եկեղեցական

« պատմութիւններն անուրանալի կերպով կը հաստատեն թէ՛ առա-  
 « քելոց ժամանակէն սկսելով մինչեւ հիմայ « բոլոր կրօնական վար-  
 « դապետներուն եւ Աստուածաբաններուն մեկնութիւններն (ան-  
 « շուշտ առանց բացառութեան ) եւ յօրինած դաւանութիւններն  
 « (կարծեմք առաքելոց միաբանութեամբ յօրինած «հաւատամք»ը ալ-  
 « նարկել կամի) «ժողովներն» (որ շատ անգամ ժողովեցան առաջին  
 « դարուն մէջ, Քրիստոսի նորահաստատ եկեղեցին ազանդներէ պահ-  
 « պանելու համար . ինչպէս նաեւ երկրորդ , երրորդ եւ չորրորդ դա-  
 « րերուն մէջ : )

«Սինոչներն» ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԿՈՐԾԱՆԻԾ՝ եւ ԱՇ-  
 « ԽԱՐՀԸ ՔՐԻՍՏՈՆԵՆՈՒԹԵԱՆ ԴԱՌՆԱԼՈՒ ԱՐԳԵԼՔ ԵՂԱՆ . եւ «Քրիս-  
 « տոսի եկեղեցին շատ մասերու բաժնեցին , ուրեմն զգուշանամք  
 « մարդոցմէ , եւ անոնց սուտ անուն զիտութենէն» անդ երես 81-82 :  
 « Եւ մեք ճշմարտութիւնը Ս. դրոց մէջ զգուշութեամբ քննած ժամա-  
 « նակնիս պիտի տեսնամք որ՝ մարդս արդար ըլլալու համար Աստու-  
 « ծոյ առջեւ , «միայն եօթը» միջոցներ յիշուած է . այսինքն՝ 1. Քը-  
 « թիստոսով . 2. իր անունով . 3. իր արիւնով . 4. զիտութեամբ . 5.  
 « չնորհիւ . 6. հաւատքով . եւ 7. դործքերով . . . եւ ասոնց ամբող-  
 « ջութեամբն է որ Աստուած կարդարացնէ զմեզ եւ կը փրկէ . ասոնք  
 « են այն «ոսկեզէն չղթային» ՄԱՆԵԱԿՆԵՐՆ , յորով մարդուս հոգին  
 « իր փրկիչ Աստուծոյն հետ կը միանայ , եւ ամեն մէկ մանեակներն  
 « հաւասար կարեւորութիւն ունին այս սքանչելի փրկագործութեան  
 « մէջ » : «Տեսարակ երես 83-86 :

Պարոն Շիշմանեանի թէ՛ այս երկար պարբերութենէն եւ թէ՛ ամ-  
 բողջ «տետրին» խօսքերէն ուրիշ բան կարող չեմք հասկնալ , եթէ  
 ոչ սա միայն թէ՛ « զրոյ մկրտութիւնը քրիստոնէից արտաքին նշանն  
 է » . իբր այնպէս , զի՝ առանց իսկ ջրով մկրտուելոյ կարելի է վեր-  
 կուիլ . իւր վերը յիշած միջոցներով : Թէ՛ սկզբնական մեղք չկայ .  
 հետեւաբար երախայք մկրտուելու չեն . քանի որ սլեաք եղած հա-  
 ւատքն , յոյսն եւ սէրն չեն կարող ունենալ . զոլով ինքեանք երա-  
 խայք : Եւ ասոնցմէ հետեւեցնելով «մեծաւ տրտմութեամբ եւ ցաւով  
 ասէ թէ՛ « Հայոց եկեղեցւոյն մէջ ճշմարտութեան շուքը միայն մնա-  
 ցեր է » , եւ ոչ բուն ճշմարտութիւնը : Արդ՝ եթէ Հայոց եկեղեցւոյն  
 մէջ ճշմարտութեան շուքը միայն մնացեր է , եւ ոչ բուն եւ իսկա-  
 կան ճշմարտութիւնը . արդարեւ չէ թէ միայն ցաւելու եւ տրտմելու  
 ենք , այլ , առանց իսկ վայրկեան մը կորսնցնելու ձեռն ի գործ ար-  
 կեալ գուն գործելու ենք դէպ ի գեղեցիկն՝ դէպ ի բարին՝ դէպ ի  
 լաւն՝ դէպ ի կատարեալ ճշմարտութիւնն թեւակոխելու : Մանուաւոր  
 քործ հազած՝ եւ մոխրոց վրայ նստած մեծակահկան ոգրերով , չէթէ  
 մեր լաթերն . այլ մեր սրտերն սլատուելով ողբալու ենք , որպէս զի ,

Աստուած որ լսող է զղջացեալ մեղաւորաց ձայներուն , լսէ մեր ալ  
 ապաշաւանաց ձայներուն . ու ներէ մեր բաղմապատիկ եւ ծովացեալ  
 յանցանաց , եւ տայ մեզ զՀոգի ուղղութեան եւ հանճարոյ . զՀոգի Աստ-  
 ուածաշառութեան եւ սրբութեան , զՀոգի զօրութեան եւ կատարե-  
 լութեան . եւ զսիրտ մաքրութեան եւ զղջանաց եւ այլն :

Իսկ եթէ ընդհակառակն գտնամք որ՝ Հայկական ուղղափառ եւ  
 սուրբ եկեղեցւոյն մէջ ճշմարտութիւնը անխառն եւ արեւի լուսոյն  
 պէս պայծառ մնացեր է այնպէս , ինչպէս որ աւանդեր են Քրիստոս  
 եւ առաքեալք եւ աշակերտք . դարձեալ ալ աւելի պարտիմք քուր-  
 ձեր հաղած ողբալ եւ ազօթիւք թախանձել զԱստուած որ՝ թէ՛ պա-  
 րոն Շիշմանեան քեզ , եւ թէ՛ նմանեացդ ողորմելով տայ հոգի դար-  
 ձի , զղջանաց եւ ապաշխարութեան . որպէս զի վերստին այն փարելի  
 եւ ազատ ու սուրբ եկեղեցւոյն ծոցը վերագառնալով՝ որոյ կաթն  
 սնարատ առժամանակ մը ծծելէ ետք , ուրանալով ուժացեր էք , այն  
 քառեակ եւ սոսկալի բաժանումէն եւ անոր քսամնեցուցիչ հետեւ-  
 անքներէն խրատուած մեզ՝ Հայոց հետ մէկ սիրտ եւ մէկ հոգի ե-  
 դած օրհնէք ամենասուրբ երրորդութիւնը Հայրը , Արդին եւ սուրբ  
 Հոգին :

Քննեմք ու տեսնամք :

Գանդատէիր դու պարոն Շիշմանեան տետրակիդ Ա՛, 64 , 73  
 եւ 74 երեսներոյն թէ՛ Հայոց եկեղեցին մկրտուելու եկող անձն մե-  
 ղաց գերի մը կընդունի : Թէ՛ իւր այս վարդապետութիւնը պաշտպա-  
 նելու համար « անմեղ մանկանց մեղք երեւակայեր » եւ անունն ալ  
 սկզբնական մեղք դրեր է : Թէ՛ Հայոց եկեղեցին մկրտութեամբ ըս-  
 կըզբնական մեղաց թողութիւն եւ վերստին ծնունդ կամ փրկութիւն  
 հաւատայ , եւ ոչ « պարզ նշան մը կամ կնիք մը » , որ համաձայն է  
 ճշմարտութեան եւ այլն : Նոյնպէս տետրակիդ Տ՛րդ երեսով ասէիր թէ՛  
 « սուրբ գիրք մեզ կուսուցանէն հաւատալով եւ ապաշխարելով մկրտու-  
 ուիլ , որ կարելի ըլլայ Ս . Հոգւոյն պարգեւն ընդունիլ » : Եւ ինչպէս  
 որ վերն ալ յիշեցինք . մանուկներու մկրտութիւնը աւելորդ համարին  
 հաւատալով եւ ընդունելով զայնոսիկ կատարելապէս արդար :

Նախ քննեմք թէ՛ իրօք արդար կարող են լինիլ նորածին ման-  
 կունք եւ ազատ ի բարկութենէ : Քննեմք թէ՛ նորածին մանկունք  
 եւ կամ կատարելութեան չհամող երախայք իրենց մանկութեան ժա-  
 մանակ չմկրտուած մեռնելու որ ըլլան , պիտի կարենան այն կատար-  
 եալ եւ բարի քրիստոնէին հաւասարապէս ժառանգել Աստուծոյ ար-  
 քայութիւնը : Հարցունեմք նախ Յօբայ Արդարոյն : Ասն մեզ ո՛ր Ար-  
 դարդ Յովք . վասն զի շատ անգամ Աստուծոյ հետ խօսելու փառքն  
 ունեցար ինչպէս են կանանցածինք . արդարութեամբ , չէնէ բար-  
 կութեամբ լի են :

Այն նորածինը , որը ծաղկի նման առաւօտուն ծաղկեցան եւ  
պրեթէ իրիկուն չեղած անոնց ստուէրն (այս ծաղկի օրինակին լաւ  
ուշ դնելու է) անդամ չմնաց . միթէ ասեմք , անոնք ալ դատաստանի  
պիտի ենթարկին , եւ անոնք ալ համար պիտի տան :

Յօլք : Երեք հազարէն աւելի տարիներու բաղմութիւն մը ան-  
ցեր է , եւ ես բաւական հոնդիստ էի տեսնելով որ իմ խօսածներս  
ամենն ալ ընդունուած էր . սակայն այժմ , ցաւօք եւ արամութեամբ  
պիտի պատասխանեմ ասելով թէ՛ դեռ նոր քննելու ելեր էք այդ  
փափուկ խնդիր . ինչո՞վ , եւ դարձեալ ինչո՞վ դրազած էր ձեր միտքը ,  
որ այսչափ անհամար տարիներ անցնելէ ետք , որ ոչ երբէք այդ մա-  
սին կասկած անգամ չկենտրոլ . թէ՛ մարգարէիւք , թէ՛ Յիսուս Քրիս-  
տոս աշխարհի փրկիչով եւ Ս . առաքեալներով քարոզուած եւ ըն-  
դունուած ճշմարտութիւնը այսօր ելեր կասկածանաց կենթարկէք : Եւ  
ալ աւելի անդին անցնելով իմ եւ մարգարէիդ , որ ամենքս ալ յԱս-  
տուծոյ՝ եւ ո՛չ ի մարդկանէ , սովրեցանք , գրոցն հակառակիք : Ահա ,  
կրկնեմ ձեզ ալ ինչ որ այդ մասին խօսած եմ ձեզ նման թիրազա-  
ւասներու առջեւ . « Զի այր կանանցածին սակաւակեաց է՝ եւ լի  
« բարկութեամբ : Որ իբրեւ զծաղիկ ծաղկեալ թօթափեցան . խոյս ետ  
« իբրեւ ստուեր եւ մի կայցէ : Ո՛չ ապաքէն եւ այնմ համար տանի-  
« ցես , եւ նմա արարեր մտանել դատաստան առաջի քո : Իսկ արդ՝  
« ո՞վ իցէ սուրբ յազոյ , այլ եւ ո՛չ որ . թէ՛պէս եւ միոյ աւուր իցէն  
« կեանք նորա » : Յօլք . ՄԴ . Գլ . 1-4 համար : Ահա իմ խօսքեր ա-  
տոնք են . ամեն անոնք որ կնիկէ ծնան՝ առանց բացառութեան , լի  
են բարկութեամբ . եւ եթէ երբէք նոյն աւուր ծնած անգամ ըլլայ  
մեռնողն , մեզքի ազտէն ազատ չէ : Պարոն Շիշմանեան այս Յօլքը  
չատ հին ըլլալուն այսպէս ըսաւ . ուստի եթէ մեզ հաւանիս աւելի  
նոր մեկու մը հարցունեմք . սա թագաւոր բանաստեղծ մարգարէին  
հարցունեմք , թ երեւո նա գոհացուցիչ պատասխան մը տայ : Ասա մեզ  
ո՞ Քնարահարդ Սաղմոսերգու մարգարէդ Դաւիթ . դու որ՝ այնչափ  
բարեկամ էիր Աստուծոյ , մինչ զի նոյն ինքն Աստուած շատ անգամ  
վկայած է « թէ իմ Դաւիթ ծառայիս իմ առջեւ ունեցած մեծ յար-  
գանացն համար վերակացու պիտի ընեմ Իօրայէլի ազգին եւ քաղա-  
քացք » : Այո՛ , քեզմէ պատասխան մը առնեմք եւ դո՞ պիտի ըլլամք  
Դաւիթ՝ Սաղմոսով : Թէեւ ո՛չ այնչափ ուրախ եմ , որ ինձ դիմեր էք ,  
այնպիսի խնդրոյ մը համար՝ որ արդէն շատ կանուխ լուսաբանեալ էր ,  
բայց ինչ որ է , քանի որ այդպէս է , ուստի պարտիմ փոքր ի շատէ  
զձեզ գոհացնել . զի ինչպէս որ գիտէք « Աստուած ինձ այն աստիճան  
սէր յայտնած է . որ մինչեւ անգամ մարդոցմէ անյայտ եղած եւ մարդ-  
կային իմաստութեան առջեւ ծածուկ մնացած բոլոր բաներն ինձ  
պարզ եւ մեկին կերպով բացատրած եւ հասկցուցած է » , ուրեմն

այդ մասին եւ ուրիշ բան եւ խօսք չունիմ . միայն այսչափ ինչ . թէ՛  
այո՛ , մարդկային ազգը անօրէնութեամբ յղացած ու մեզքի մէջ ծը-  
նած է , այլ ի՛նչ անուն որ ուզէք կրնաք տալ , եթէ սկզբնական եթէ  
նախնական , եթէ Ադամական եւայլն , Սաղմոս Մ . Գլ . 6-7 համար :

Եկո՛ւ պարոն Շիշմանեան , ձգենք այս հին գլուխի տէր արդար-  
ներն ու մարգարէներն . զի ահա , ինչպէս երկուքին բերնէն ալ լսե-  
ցինք , ասոնք միշտ իրենց թմբուկը զարնեն ու պիտի զարնեն : Եր-  
թանք ուրիշ աւելի նորերու դիմենք եւ անոնց հարցնեմք . թէեւ  
գիտեմք որ անոնք ալ իրենց « վարդապետութիւնը » եւ քարոզու-  
թիւնը հաստատելու համար Լիգուրկոսի , Սօղոնի , Սոկրատայ եւ նը-  
մանեաց պէս օրէնսդիր իմաստասիրաց խօսքերէն վկայութիւն չեն ըե-  
րած : Սակայն՝ աղստամիտ եղբայր , պատասխանեց պարոն Շիշման-  
եան , խնդիրէն հեռու չերթանք , խնդիրը ՄԿՐՏՈՒԹԻՒՆ և ՎԵՐՍՄԻՆ ԵՐԼ-  
ՆՈՒՆԿԻ ըսուածն . իմ նպատակն այն է թէ՛ « մկրտութիւնն ինքնին  
կարող չէ՛ այն մարբութիւնը՝ լուացումը տալ » . տեարկ երես 92 :  
Եւ եթէ երբէք մկրտել ալ պէտք ըլլայ ի ՆՇԱՆ կամ ի ԿՆԻՔ քրիս-  
տոնեայ լինելուն . չափահաս ըլլալէ եւ ինչ ըլլալը հասկանալու կա-  
րողութիւն ունենալէ վերջը պէտք է մկրտել : Զի ինչպէս շատ ան-  
գամ ըսած եմ , մանուկներն անմեղ են , եւ պէտք չէ մկրտել : Սա-  
կայն՝ պարոն Շիշմանեան , չափահասը մեղօք լի են . եւ դուք ասէք  
թէ մկրտութիւնը ինքնին կարող չէ՛ այն լուացումը ընել . այլ միայն  
ՆՇԱՆ կամ ԿՆԻՔ մ՛է ջրով լուանալն՝ մկրտելն : Տեարակ երես 73 :  
Հակասութիւն մ՛է այս : Միթէ գոմերու տէր եղող մեծատանց գոր-  
ծածած երկաթեայ նշանին կամ կնիքին գործածութեան պէս գործո-  
ղութիւն մ՛է այս լուացումը կամ մկրտութիւնը , որ Քրիստոսի ըս-  
տացուածքն լինելուն նշանը կամ կնիքը համարեմք զայն . . . : Որ  
միշտ յանուն ՀՕՐ եւ ՈՐԳԻՈՅ եւ ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ կատարեմք ի թողու-  
թիւն մեղաց եւ ընդունելութիւն Հոգւոյն օրըոյ , որով եւ վերածնի  
մկրտեալն , որգեգիր եւ ժառանգ լինի արքայութեան Աստուծոյ :  
Միթէ ասեմք . այն մեծատանց ի գործ օժտած կնիքին եւ նշանին պէս  
բա՞ն մը ըլլալ Հաւատաս ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ , որոնք (նշանն ու կնիքը) ի կիր  
ստնուն իբրեանց ստացուածքն ուրիշի ստացուածոց հետ չպիտի լինոյ :  
« Խորթնաբանութեանց սկսելուն հետ (ասէ) միասեղ սկսան սորվեցնել  
« թէ՛ առանց հաւատքի , լոկ մկրտութեամբ մեղաց թողութիւն կըլ-  
« լայ . եւ թէ՛ առանց հաւատքի մկրտութիւնը վերստին ծնունդ է :  
« Յայնժամ սկսեց սկզբնական մեղաց (որ Ադամայ անկումէն սկսած  
է , եւ այդ մեղաց համար էր որ մարդկային ազգը այն սարսափելի  
վճռոյն « հող էիր դարձեալ ի հող դարձցիս » ենթարկեցաւ , եւ որուն  
տակն է մարդը եւ պիտի մնայ յաւիտեան , ինչպէս տեսնեմք Յօլքն



ու Գաւիթ իրենց վկայութեամբն . ուստի եւ անտեղի է յայնժամ ըստ  
կրօնաց ըսելիք : Բայց դու յանցանք չունիս . վասն զի՝ « քո վարժապետ  
Տօքատօր Ուօլ , զայդ ուսուցեր է քեզ . տեարակ երես 67 ) : Վիճարա  
նութիւններն , եւ անոր հետ « միասնել մեզաց թողութեան համար  
« մանկավարժեան պիտանաւորութիւնը յառաջ եկաւ . եւ այնքան  
« անուրանալի կերպով ընդունուած էր թէ՛ մկրտութիւնը մեզաց թո  
« ղութեան համար է ( \* ) , որ երբ Պէղազեանք ( պարոն աւետարանչին  
« նախահայրերն հաւատակիցներն ու դաւանակիցներն ) որ սկզբնական  
« մեզքը չընդունողներ էին , պատասխան չի գտան թէ՛ ինչո՞ւ ան  
« մեղներն կմկրտէին . ( զարմանալի է պատասխան չգտնալին ) ստիպ  
« ուեցան մանկանց ալ գործնական մեզքեր հնարել : » Տեարակ երես  
63-64 : Ընթերցիր նաեւ 27, 28 եւ 29 երեսներն : Պարոն Շիշման  
եանի վերոգրեալ խօսքերն ընթերցողք . անշուշտ մեզ հետ պիտի  
պարտաւորին ասել թէ՛ այս անձը . մեծ հաւատքով առ Ս. երրորդու  
թիւնն , եւ բարի ու քրիստոնէավայել գործքերով լեցուն մկրտողն  
միայն աղափի ի մեզաց : Անշուշտ չափահաս լինելէ ետք գործած  
մեղքերէն : Եթէ այդպէս , ուրեմն , « ի թողութիւն մեզաց եւ յըն  
դունելութիւն Հոգւոյն սրբոյ ՄկՍՏԵԼՈՅ հարկ չկայ յանուն երրոր  
դութեան : Զի դու ասես թէ՛ մկրտութիւնը փրկութեան կամ մեղաց  
թողութեան միջոց չէ՛ . այլ քրիստոնէական անհրաժեշտ պարտաւ  
րութիւն է : ( Ինչպէ՞ս պարտաւորութիւն է օգնել ընկերին , խնդրողին  
տալ ըստ կարի . զգուշացնել դէպի խորխորատ դիմող անձը եւ այլն )  
եւ հաւատալ որ Յիսուս Քրիստոսով այս փրկութեան գործը կատա  
րելապէս եղած ըլլալով ուրիշ նախնական կամ երկրորդական միջոց  
պէտք չէ . եւ մկրտութիւնն ալ իբր հետեւութիւն ընդունիլ . բայց ոչ  
անմիջապէս մանկանց համար ալ . զինքնա չգիտնն ո՛չ աջ եւ ո՛չ  
աջեակ :

Թէեւ գիտենք որ մկրտութիւնը խիստ հին է , Քրիստոսի ժամա  
նակակից է , սրով եւ Բ. դարու մէջ բոլորովին արմատացած էր : Եւ  
ինչպէս Քրիստոսի ժամանակ տեսակ տեսակ աղանդաւորներ պակաս  
չէին . այսպէս ալ նոյն Բ. Գ. ( մինչեւ ցարդ ) դարերուն Պեղազիտի  
եւ նմանեաց աղանդներն երեւիլ սկսան : Արք՝ ինչպէս պարոն աւե  
տարանիչն ալ խոստովանի , իրենց այլ եւ այլ մոլորութեանց հետ ըս  
կըսան ասել « ըստ որում մանուկներն մեզք չունին . ուրեմն պէտք  
չէ՛ մկրտել զայն » , եւ արգելուլ կամէին մանկանց մկրտութիւնը  
հակառակ դաւանութեան ընդհանուր եկեղեցւոյն Քրիստոսի : Զի այս  
էր անատենուան հաւատքը թէ՛ մարդն անմաքուր է , մեղաւոր է ծը  
նընդեամբ , ըստ Յագմատին . « անօրէնութեամբ յղանայ եւ ի մեզս  
(\* ) Այս խօսքերով պարզապէս ասել կամի թէ՛ « մկրտութիւնը  
մեզաց թողութեան համար Զէ :

ճնանի . Ծ. Գլ. 6 համար : Եւ այս մեղքէն կամ անմաքութեանէն ա  
զատելու համար մկրտութեան սրբարար խորհրդոյն զիմէին եւ սրբ  
քէին ի մեզաց անտի : Նոյնն Անանիա քարոզեաց Ա. դար . յասեչն աւ  
Պօղոս « արի , մկրտեա՛ց , եւ լուա՛ զմեզս քո » . Գործոց , ԻԲ. Գլ. 46  
համար : Թէեւ Պօղոս արդարացած էր դրոյստոնեայս հալածելոյ եւ  
սպաննելոյ մեղքէն կատարելապէս զղջացած գոլով : Մանաւանդ .  
հնազանդած էր Յիսուսի , եւ անոր կամացն ու հրամանին անձնուի  
րաբար ծառայելու պատրաստ : Այսպէս էր նաեւ կիպրիանոսի հա  
ւատքն . զի՛ գմարդ ճննդեամբ մեղաւոր եւ այդ մեղքէն ազատելոյ  
միակ միջոց՝ մկրտութիւնն դաւանել : Այսպէս էին նաեւ Որոգինեայ ,  
Օգոստինեայ , Բարսղի , Ոսկերերանի եւ այլոց դաւանութիւնքն : Ո  
րոնք՝ ինչպէս յայտ է , Քրիստոսի մօտ լինելով ժամանակաւ , անշուշտ  
նախնական եկեղեցւոյ գրութիւնը ընդունած էին եւ զայն քարոզե  
ցին : Ասել է թէ՛ նայնի հարք ինչպէս որ գտան , այնպէս ալ ընդու  
նեցին եւ մեզ աւանդեցին . ուստի անտեղի է մանուկներն չմկրտելոյ  
մերկ քարոզը եւ վարդապետած անապաղոց զրութիւնը : Վասն զի  
այդ զրութեամբ կարելք հետեւցնել եւ ասել թէ՛ Յիսուսի Քրիստոսի  
անունը բնաւ չլսող , բայց գործքով անմեղ , եւ չարութեան համար  
փոքրիկ մանուկ եղող հեթանոսք ալ պէտք է փրկուին : Մանկանց  
խելքն բարւոց եւ չարի անհաս գոլով անմեղ են հրատարակողն , ան  
տարակոյս պիտի ընդունին նաեւ բարւոց եւ չարի գիտութեամբն հան  
դերձ բնաւ չարութիւն չգործող , եւ գործողներն ալ յանդիմանող  
անմեղ հեթանոսաց արդարութիւնը . եւ որով անշուշտ փրկութիւնը  
Տեսաննօս , ո՛րը դնաց զրութիւնը . . . . Քարոզեալ թէ՛ Յիսուսի Քրիս  
տոսի հաւատալով եւ բոլոր արդարութեան պահանջած պայմաններն  
որք եօթ են ասես . յօժարութեամբ եւ կատարելապէս գործելով ար  
դարացած եւ մեղքերէ ազատած լինի : Յիշէ՛ տետրակովդ 86 երես .  
տուած օրինակը : Ուրեմն այդ միջոցներով արդարացող ինչպէս Պօղոս  
եւ այլք , եւ կամ բնաւ մեղք չունեցողք , պէտք չէ մկրտել :

Քննեմք եւ տեսնեմք թէ՛ քո այդ քարոջ ճնարիտ եւ համա  
ձայն է Աստուածային Ս. Պատգամաց :

Նախ՝ Յիսուսի Քրիստոսի երկնաւոր վարդապետին զիմենք  
եւ նա հարցանեմք : Ասա՛ մեզ Յիսուս սրբի Աստուծոյ . եթէ  
կենան մարդիկք որ՝ այս աշխարհի վրայ , տակաւին քո ամենօրնեալ  
անուն չլսած եւ քո հոգեկեցոյց վարդապետութիւնը մտիկ չըրած  
( ինչպէս հինգ վեց հարիւր միլիոն կռապաշտք ) այնպէս բարի բարի  
գործերով առաքինի հանգիսացած , եւ թերեւս անիրաւութեանց ,  
անողամտութեանց եւ շատ տեսակ անբարոյականութեանց դէմ ասոց  
եան կազնած , եւ այդ առթիւ մինչեւ իսկ իրենց կեանքը զոհ տը  
ուած ըլլան բնական լուսով առաջնորդեալ , եւ բնաւ օր եւ է չա



ցոյց վարդապետութիւններս լսողներէն . . . : Բայց միայն որդիքն կո-  
րըտեան . . . : «Քրթմնջէին ընդ միմեանս եւ ասէին, զի՛ արդ կարէ-  
սա տալ մեզ դմարմին իւր յուտել : » Յովհանն 9. Գլ. 50-59 համար :  
Արդ՛ թող չմարմաջեն ու չզանդաչեն եւ կասկածի տակ չձգեն ասե-  
լով, միթէ կարելի՞ է ՀԱՅԻՆ եւ ԳԻՆԻՈՅՆ միջոցաւ, որ իմ ՄԱՐԲ-  
ՆՈՅՍ եւ ԱՐԵԱՆՍ խորհրդական նշանակն կրէ յինքեան . ներդրծա-  
կան մեղաց քաւութիւն լինիլ : Այսպէս եւս ՋՐՈՅՆ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ  
ընդ ներգործութեամբ Հոգւոյն սրբոյ, քաւութիւն մեզանցն Աղամա-  
կան եւ միջոց որդեգրութեան Հօրն երկնաւորի : Եւ ոչ թէ «կնիք»  
կամ «նշան» :

« Բայց խիստ է բանդ, մի կարէ լսել դմա . » Յովհ. Գ. Գլ. 61  
համար : « Ոչխարք իմ ձայնի իմում լսեն . . . եւ ես տամ նոցա  
զկեանսն յաւիտեանականս . » Յովհ. Ժ. Գլ. 27-28 համար : Երթմալք-  
պարոն Շիչմանեան, աւելի ծանր յանդիմանութիւնք չլսած մեր  
երկնաւոր վարդապետէն : Ընկերացիք, եւ հետեւէ մեզ . երթմալք  
սրբազան առաքելոց դիմենք, կարելի է որ նոքա լուսարանն քա-  
ցայայտ կերպիւ Յիսուսի Քրիստոսի դրած ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱՅ  
բուն նպատակն ու միտքը : Նախ սա Պօղոս Տարսնացւոյն, հեթա-  
նոսաց վարդապետին դնամք, վասն զի առաւել քան դամենեոյն  
գնոսա (քան զայլ առաքելայն) վաստակեցի ըսած է, Ա. Կորնթ. ԺԵ.  
Գլ. 10 համար : Մեր յուզած խնդրոյն գոնացուցիչ լուծումն  
թերեւս կարենայ տալ, զի քաջ գիտեմք, որ մարդոց հաճելի ըլլա-  
լէ աւելի, Աստուծոյ հաճոյանալ երդուած է, եւ ընդ նոզմիւր դրած է  
Քրիստոսի առաքելոց ուսուցածէն աւելի կամ պակաս սովբեցու-  
նողներն, այսպէս . « բայց եթէ իցեն ոմանք որ խոզվեցուցանեն  
դձեղ, եւ կամիցին չըջել (տարբեր կերպով, բուն իմաստին հակա-  
ռակ մեկնել) զԱւետարանն Քրիստոսի . . . նզովեալ եզիցին . . .  
նզովեալ եզիցին » . Գաղ. Ա. Գլ. 6-10 . եւ դարձեալ, բոլոր առա-  
քելոց եւ իւր համար վկայէ անդ 12 . թէ՛ ուղղակի Յիսուս Քրիս-  
տոսէ սովբեր են : Աւրեմն, սրբազան առաքելալ Պօղոս, ասա մեզ.  
ամենայն մանկունք նորածինք եւ կամ անչափահաս որդիք մարդկան-  
որոնք՝ խելք, կամք, դատողութիւն, եւ այլն կատարելութիւններ  
չունենալնուն համար՝ « դեռ մկրտուելու յարմարութիւն չունին »  
ըստ նոր աւետարանիչ Շիչմանեանի, եւ մկրտուած չեն ու անմեղ  
են, ինչպէս նաեւ ամեն անոնք որք՝ ոչ երբէք լսած . եւ կամ բնաւ  
երեւակայած անգամ չեն զՔրիստոս եւ զԱւետարան, սակայն, ա-  
մենայն մաքուր բարոյականութեամբ եւ առաքինութեամբ լի են,  
որոնց համար շատ խօսեցանք, կարելի բան է Աստուծոյ որդեգիր  
եւ արքայութեանն Աստուծոյ ժառանգորդ լինիլ առանց երբէք ջրով  
մկրտուելոյ յանուն ամենասուրբ երրորդութեան : — Ի՞նչ տարօրի-

նակ հարցում : Միթէ ես, որ օրինաց քարոզ եւ Աւետարանին պաշ-  
տօնեայ կարգեցայ ի Յիսուսէ Քրիստոսէ, ծնւա վարդապետեցի, երբ  
ստիպեցին զիս Հոռովայեցիք . . . :

Ուշադրութեամբ պարտ էր ձեզ ընթեռնուլ թլփատութեան նը-  
կատմամբ դրած Բ. Գ. Գ. եւ Ե. գլուխ ճառերս, զի անդ երկարո-  
բէն խօսած եմ, եւ որոց եզրակացութիւնն կարէ լինիլ հետեւեալն :  
« Զի ի միջէ մարդոյ մեղք յաշխարհ մտին, եւ ի մեղաց անտի մամ . . .  
թաղաւորեաց մահ (սկսեալ) յԱդամայ . . . եւ Ի ԱՆՐԱՅ ԶՅԱՆՅՈՒՅՆ-  
ԼՈՅՆ ըստ նմանութեան ՅԱՆՅՈՒԱԾՈՅՆ Ադամայ . . . զի դատաստանն  
ի միջէ յանցուածոցն անտի՛ ի դատապարտութիւն » եւ այլն, Հոռով.  
Ե. Գլ. 15-19 համար : Այս չորս գլուխներն լրացնելէ ետք, պէտք  
է ուշադրութեամբ ընթեռնուր հետեւեալն որ՝ բոլոր այն ճառերուս  
վերջաբանն կամ կնիքն է : « Եթէ ոչ գիտէք, զի որ միանգամ մկրտ-  
սեցաք ի Յիսուս Քրիստոս, ի մահ անդր նորա մկրտեցաք, թաղե-  
ցաք (մեք) ընդ նմին մկրտութեամբն ի մահ, զի որպէս յարեաւ  
Քրիստոս ի մեռելոց փառօքն Հօր, նոյնպէս եւ մեք ի նՈՐՈՎՈՒՄՆ  
ԿԵՆԱՅ ՇՐՋԵՍՅՈՒԹ » . Անդ. Զ. Գլ. 3-5 համար : « Զայս գիտասջ՛ք  
զի հին մարդն մեր խաչակից եղեւ նորա (ինչ ասել կամի Հի՛ն  
ՄԱՐԳ ասելով, պատասխանն ինք տայ հիմայ) զի ԻԱՓԱՆՅՍՅԷ  
ՄԱՐԿԱՍ ՄԵՂԱՅՆ » : Ո՞ր մարմինն, հին մարդն կամ մարմին մե-  
ղացն անելով, արդարացնէ զբան Սաղմոսին Ծ. Գլ. 7 համար, եւ  
որով հոչակէ վերստին խոստովանելով զճշմարտութիւն Սաղմոսին  
թէ՛ մարդկային ազղը եւ քրիստոնեայ, եւ Հրջայ եւ Հեթանոս,  
« անօրէնութեամբ յշանան եւ ի մեղս ծնանին » : Առանց եւ ոչ միոյ  
ուրուք բացատրութեան : Բաց ի Յիսուսէ Քրիստոսէ, որոյ յղութիւնն  
ու ծնունդը ի Հոգւոյն սրբոյ էր, եւ զայդ մտածելն իսկ ծանր  
մեղք է :

« Զի այն որ մեռանի, ասէ առաքեալն Պօղոս, արդարացեալ է  
ի մեղաց անտի » . Անդ. 7 համար : ( Ո՞ր մեղքէն, յԱդամայ աժանց-  
եալ մեղքէն զատ ի՞նչ մեղք կրնայ ունենալ նորածին մանուկ մը,  
եւ կամ չմկրտեալ բայց բնաւ երբէք մեղք չգործող մի մարդ ) :  
Միթէ առ Տիտոս եւ առ Գաղատացիս դրածներս հակառակ իմ մեծ  
Վարդապետիս քարոզներուն գրեցի : Ո՞չ, քան լիցի . այլ՝ ինչ որ  
սովբեցայ ի Հոգւոյն սրբոյ եւ յԱռաքելոց սրբոց, զայն ուսուցի  
այնպէս . « Ո՛չ ի գործոց արդարութեան զոր արարաք մեք, այլ ըստ  
բազում ողորմութեան ԱՊՐԵՅՈՅՅ ԶՄԵԶ Ի ՁԵՌՆ ԱԻԱԶԱՆԻՆ ՄԻԻ-  
ԱԱՆԳԱՄ ԾՆՆԻԿԵԱՆՆ, եւ նորոգութեամբ Հոգւոյն սրբոյ » . Տիտ.  
Գ. Գլ. 5 համար : Եւ դարձեալ . « Որք միանգամ ի Քրիստոս մկրտ-  
սեցաք, զՔրիստոս զգեցեալ էք եւ այլն » . Գաղա. Գ. Գլ. 27 համար :

Պարոն աւետարանիչ, թողլով զառաքելալ Պօղոս, եկ երթամք







ՉՍԳԱՍԵԱԼ ԵՒ ԼՐԱՆԱԼՈՑ ԱՌՈՒՐՑ ՈՒԹԻՅՑ , եւ պատասխանի տային ընդ նոցա կնքահարք եւ կնքամարք . բայց զհամորէն նորոզ մկրտեալան՝ յամենայն հասակի մանկունս անուանէին . . . Կաթն եւ մեղր ջամբէին ի կերակուր առ նորածնեալսն յԱւաղանէն՝ առ ի յայտ առ նեղ զմտանել նոցա ի ճշմարիտ երկիրն Աւետեաց , եւ զհոգեւորական մանկութիւնն . քանզի այս իսկ էր յայնժամ կերակուր տղայոցն հատեղոց ի ստենէ . . . մկրտեալքն կատարելահասակք չփոխէին զանուն իւրեանց . քանզի անա բազումք ի սրբոց զԳիցն բերեն զանուանս , որպէս զԳիոնեսսիոսն եւ Մարտինոս եւ Դէմէտր : Այլ մկրտելոցն ի տըղայութեան՝ կոչէին զիւրաբար զանուանս Առաքելոցն , կամ զբարեպաշտութեան անուանս՝ յայտարարս առաքինութեանց եւ զհաւատոց , որպիսի են յունական անուանք Եւսեբիոս , Եւստաքէոս , Իսիւքոս , Գրիգորիոս , Աթանաս , հանդերձ այտովքն : Մասն երկրորդ , յօդուած երկրորդ , երես 302-303 : Քաղած է , Տերտուղ , յաղագս մկրտութեան գլուխ ԺԹ . Ի . եւ յայլոց : Եւ միթէ այս եկեղեցին Հայոց , որ այսպէս եւ այլքան համաձայն է Սուրբ գրոց հին եւ նոր կտակարանաց եւ Առաքելական Աւանդութեանց , միթէ ասեմք հայհոյել , չէնէ օրհնել է զՍուրբ Հոգին որ՝ նորա (եկեղեցւոյն) անսխալ առաջնորդն է , ուսուցիչն է . «Եւ յորժամ եկեսցէ Միթարիչն , ուսուցէ ձեզ զամենայն» : «Եւ ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչեւ ի կատարած աշխարհի» : «Եւ բնակեսցի ի ձեզ ի յաւիտեան» եւ այլն եւ այլն : Աւետարան : Միթէ նախասել եւ հայհոյել չէ՞ Ս . Հոգւոյն առաջնորդութիւնը , ասել ու գրելն թէ՝ « Հայոց եկեղեցւոյն մէջ՝ ճշմարտութեան շուքը միայն մնացած է » . տես տետրակ երես 15 : Սակայն գիտնալու էք պարոն Շիշմանեան որ «եւ որ զՀոգին Սուրբ հայհոյեցէ , մի թողցի նմա , ոչ աստ , եւ ոչ ի հանդերձելումն» , վճիռն արձակողն նոյն ինքն Աստուածամարդն Յիսուս Քրիստոս էր , որոյ Աւետարանին իբր եմ ըսելու չէք կարմիրք . բայց թող հոգ չընեն մեր Մեծ . ընթերցողք . զի շատ անգամ հրեշտակք չարին եւ խաւարին «կերպարանին զկերպարան լուսոյ հրեշտակաց» : Փակեմք այս Բ . Հատուածն ալ վերջացնելով Մկրտութեան Ս . խորհրդոյն նըկատմամբ խօսածնիս , եւ զառնանք այդ «տետրակի» միւս պարբերութեանց վրայօր ալ տեսութիւններ ընել :


Յունական եկեղեցւոյն ներկայ սնոդոք յամառութիւնը կրկնամկրտութեան եւ կրկնամուսնութեան մէջ , փաստ կամ ապացոյց չէ կարող լինիլ , զի այդ յամառութիւն՝ իւր նշանակութիւնը շատնց կորուսած է . եւ ցորչափ նա յամառի եւ անոզոր մնայ մասնաւոր Յոյն եկեղեցականաց կողմանէ տեղի ունեցած նախատանաց առ սուրբ եւ առաքելական եկեղեցին Հայոց , այնչափ , եւ ալ աւելի փառաւորեալ պիտի մնայ Հայկական սուրբ եկեղեցին . վասն զի , թէ՛ մեք եւ

թէ՛ մեղի հետ ամեն ազգի ճշմարտասէրք համոզուած են թէ՛ Եւսեբիոս , Աթանաս , Բասիլիոս , Գրիգոր Նազիանզացի , Գրիգոր Նիւսացի Ոսկեբերան եւ այլք բոլորն ալ Յոյն եկեղեցական Ս . Հայրեր՝ արդէն զատապարտած են յունական կղերին արդի սնոդոք յամառ եւ մոլեռանդ քաղաքականութիւնը , իւրեանց արդիւնաշատ գրուածոց միջոցաւ :

Նա մանաւանդ , յիշեալ սուրբ Հարց թուականէն շատ տարիներ վերջերը Յոյն եկեղեցին պաշտօնապէս ձանչցած է զեկեղեցին Հայոց եւ առաքելաշաւիղ . եւ որոց վկայութիւններէն քաղելով հինգերորդ դարէն սկսեալ մինչ ցերկոտասաներորդ դար , հրատարակած եմք Մանզումէ թերթին 4685 եւ 4686 թիւերովն . եւ զոր ուզողն կարող է անդ տեսնել :

Կրնքեմք այս հատուածն ալ խոստանալով Հայոց եւ Յունացնրկատմամբ խնդրոյ նիւթ եղած կետէրու վրայ խօսիլ երբ առիթն ներկայանայ : Այժմ պիտի անցնիմք քննել թէ ձեռնադրութեան խորհրդոյն մէջ՝ կա՞ն իրօք պարոն Շիշմանեանի զառանցանաց նշանախեցն անգամ . թէ՛ Հայոց սուրբ եկեղեցին ձգելով զՔրիստոս երկնաւոր ուսուցիչն եւ Անոր ուսուցածն , մարդերու եւ մարդոց աւանդութեանց հետեւող է եւ այլն :

ՎԵՐՋ Ա . ՄԱՍԻ ԵՒ Բ . ՀԱՏՈՒԱԾԻ



**ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ**

**Հ Ա Տ Ո Ւ Ա Մ Ա .**

ԹԷ ԻՆՉՈՒ ՊԱՀԱՆՋԷ ԵՊԻՍԿՈՊՈՍՆ Ի ՔԱՀԱՆԱՅԱՅՈՒԻՆ ՀԵՏՏԻԻԼ  
Ս. ՀԱՅՐԱՊԵՏՍՑՆ Ի ԺԱՄ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ

«Տեարակին հեղինակն՝ եթէ արժան է ըսուիլ հեղինակ . Ս. մըկրրտութեան խորհրդոյն նկատմամբ իւր դաւանութիւնը (որն որ աւսանք գործոյս Ա. մասին Բ. հատուածով) տալէ եւ Հայկական սուրբ եկեղեցւոյ երասայից մկրտութեան դրութիւնը՝ ըստ իւրում խելապատակի . դատապարտելէ ետք , անմիջապէս «ձեռնադրութեան» խորհուրդն ձեռք առած գայթ ի գայթ քանի մը թիւր տեսութիւնք ընելով իբր ՆՈՐ ՔԱՂՈՒՐ մը , քաղաքական սուրբ եւ գաղանձածուկ նկատմունք մը եւս յառաջ քշէ : Ա. յնպիսի նկատում մը , որ բնաւ վերաբերութիւն չունի , ո՛չ մկրտութեան եւ ո՛չ ալ ձեռնադրութեան խորհրդոյն (կամ ըստ իւր , արարողութեանց) հետ :

Այն , քաղաքական նկատում : Զի . ի՞նչ հարկ ստիպած է զպարոնն որ՝ մկրտութեան եւ կամ ձեռնադրութեան առթիւ խօսելու ատեն հետեւեալ տողերն ալ գրէ . . . :

« Զարմանք է , որ այս ոսկեղէն դարուս մէջ , քանի որ՝ քրիստոնեայ ազգեր հսկայաքայլ յառաջ կերթան ԱՋԱՏՈՒԹԵԱՆ եւ ԵՐՋԱՆԿՈՒԹԵԱՆ ասպարիղին մէջ , մեր սիրելի ազգը , ԹՇՆԱՄԵԱՅ ՌՏՆԱԿՈՒ եւ աշխարհի մէջ ԾԱՂԻՆԻ եղած է » :

Ինչո՞ւ արձակ համարձակ չէք խօսիր պարոն աւետարանիչ , ի՞նչ ասել կամիք այդ տողերոյն : Շնորհ ըրէք բացատրել եւ հասկացնել թէ՛ մը « թշնամայ » ոտնակոխ , եւ որ աշխարհի մէջ « ծագրելի » եղած է Հայն . . . :

Նոյնպէս շնորհ ըրէք բացայայտ խօսելու եւ պարզելու թէ՛ որ քրիստոնեայ « հպատակ » ազգերն են ԱՋԱՏՈՒԹԵԱՆ մէջ հսկայաքայլ յառաջ գնացողներն Հայոց մէջ աւելի , եւ ԵՐՋԱՆԿՈՒԹԵԱՆ ասպարէղին մէջ քան զՀայս երջանիկ եղողներն . . . : Միանդամայն ըսէ , թէ՛ ի՞նչ կարգի « ազատութիւն » եւ ի՞նչ դոյն « երջանկութիւնք »

եւ քանի՞ արտավար « ստարէղ » մ'է այդ : Ո՞չ ապաքէն այդ խօսքերովդ . . . . . : Փակեմք այդ խնդիր եւ գամք մեր գործին .

«Ա « Հակոտնէից աշխարհէն » նոր եկող եւ Քրիստոսի աշակերտաց կողմանէ յատուկ զրկուած նոր աւետարանիչը . ձգելով ձեռքն եղած Աւետարանն՝ Մեծ Մաշտոց մ'է առեր ձեռքն , ուստի , մեր եւս այդ մեծ Մաշտոցն ձեռք առնեմք եւ քննեմք թէ՛ իրօք Յսկուսի Քրիստոսի ուսուցչութեան պաշտօնը ուրանալով ընդունած է , բացի Յիսուս Քրիստոսէ . « ուրիշ շատ մը ուսուցիչներ » Հայկական եկեղեցին : Տեարակ երես 16 :

Քննեմք համառօտիւ թէ՛ Հայկական եկեղեցին հակառակող է , Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի . ըստ վկայելոյ արտակէդրոն պարոն աւետարանիչն :

Նախ՝ սա պէտք է զիտնալ որ՝ Յիսուսի Քրիստոսի հակառակողներն բնաւ Յիսուսի Քրիստոսի շնորհաց տեր լինիլն պէտք չէ խօսովանին , ըստ որում հակառակող են , եւ ուղղակի իրենց տէր ճանչցածներուն դիմեն , որ արամարանական ալ է : Բայց տեսնեմք թէ՛ Հայկական եկեղեցին այնպիսի արարմունք կամ դաւանութիւն մը ունի՞ , այնպէս , ինչպէս զբղարատէ պարոն Գ. Ն. Շիշմանեան աւետարանիչն .

Ահաւասիկ բանամք Մեծ Մաշտոցի 235րդ երեսն . ուրկէ սկսի ձեռնադրութեան խորհրդոյն արարողութիւնը : Սարկաւազն . « միաբան ազաչեսցոնք զՏերն մեր Յիսուս Քրիստոս վասն ծառայիս » : Եւ պիսկոպոսն : Տէր Ատուած մեր նայեա՛ յերկրպագութիւնս մեր եւ պանօրանեա՛ զճառայս քո , եւ զամենեանն՝ որք են ի պաշտման այսմիկ , եւ հաստատեա ի նոյն՝ Քոյին օգնականութեամբ . . . ծագեա՛ ի հոգի սորա՛ զհոգի իմաստութեան ի մեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի : 236րդ երեսն բանամք : Եւ պատուիրէ եպիսկոպոսն ասելով , « ունին զիր , եւ տես բոլորով սրտիւ . զի զոր եղանակէս (զՍաղմոսն) բերանով , հաւատասցես եւ սրտիւ , եւ որոյ հաւատաս , զնոյն եւ գործով ցուցես » :

Բանամք 238րդ երեսն : դու Տէր . . . հեղ զամենապայլ շնորհս ողորմութեան քո ի վերայ ծառայիս . . . եւ պուր տես զգաստութիւն յամենայն ժամ յորէնս քո . . . զգաստութեամբ խօսիլ զԲանս քո եւ ընթեռնուլ զիրս օրինաց քոց ի սուրբ եկեղեցին . . . յունկն զբութիւն պատուիրանաց քոց ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի : Գարձուր երեսը եւ բաց 240րդն : Տէր Ատուած մեր . . . օրհնեա՛ եւ այժմ զճառայքս . . . եւ լուսաւորեա՛ զսիրաս եւ զհոգիս ժառանգաւորացս այսոցիկ ի ճառագայթից սուրբ Հոգւոյդ , հաւատով սպասաւորել . . . խնդրեմք ի գէն Տէր Յիսուս Քրիստոս պանօրանեա՛ զսա եւ զսիրաս սորա յերկիրդ քո սուրբ եւ լուսաւորեա՛ լուսով իմաստութեան քո











սուրբ կրօնն անայլայլակ առ մեզ հասցունող Սրբազան Հայրապետաց . . . Ոչինչ . . . Կամ աւելի ուղիղն խօսելով, նախատեցինք զանոնք, « յախշտակող գայլ », « մոլորեցուցիչ » եւ այլն եւ այլն անուանելով, տես « տեսարակը », որոյ մէջ շատ տեղ ըսած է « սլարն անտիքրիտոտսեան աւետարանիչն : Եւ միթէ մեք այսպէս յոռեղոյնս ընթանալով եթէ նկրտիմք նախատել եւ հայտել զսուրբ Հարս, Յիսուսի Քրիստոսի ըսած « որ զձեզ ընդունի, զիս ընդունի, եւ որ զիս ընդունի, ընդունի զԱյն՝ որ առաքեացն զիս . եւ ես յարուցից զնա յաւուրն յետնում » . ճշմարտութեան հետեւած լինիմք . . . Շարունակեմք : Երեւի թէ՛ պարոն Շիշմանեան մեր ութերորդ գարու Հայրապետաց ոմանց անուններէն կարի յոյժ խրատած է . ինչպէս է սուրբ Յովհաննէս օրմաստասէր » (օձնեցի) Հայրապետի անունէն, գիտնալով անշուշտ որ՝ այս սուրբ Հայրապետն էր, որ հոգետեսութեամբ, իրմէ հաղար երկու հարիւր տարւոյ չօրի ժամանակ անցնելէ վերջ՝ պարոն Շիշմանեանի պէս մարդիկք եւ եկեղեցական սուրբ զարդուց, Յիսուս Քրիստոսի Աստուածախառն մարմինէն հոսած արեամբն ներկեալ Ս. Խաչին եւ նորա Տէրունական պատկերին եւ այլն, դէմ՝ մարանչողք ալ պիտի գան . ուստի քարոզէ բարձրաձայն գրելով այսպէս : « Ահա գտաւ որոգայթ իրրեւ զվարմ հաւորաց, ձգեալ ի մէջ ժողովրդեանն ազգի իւրոյ, ըմբռնել զախմարս եւ զպարզամիտս ի մարդկանէ, որք չարեաց ի չարիս ելին, ի պատկերամարտութենէ ի խաչամարտութիւն եւ ի Քրիստոսատեցութիւն . եւ անդուստ յԱնաստուածութիւն եւ ի դիւապաշտութիւն » եւ այլն : « Յովհաննէս օրմաստասի ճառ ընդդէմ Պաւղիկեանց » :

Մայրագոմեցւոյն աշակերտներէն մին՝ Սարգիս, այս ատեններն Պաւղիկեանց՝ (հետեւողք Պօղոսի Սամստացւոյ) Յուլիանիտաց, Ապօղինարեանց, Մարկիոնեանց եւ Սաբելեանց աղանդներն ի մի ձուլելով սկսած էր զՀայաստան վեր ի վայր ընել իւր մոլորամիտ վարդապետութեամբը . որոյ ընդդէմ վերը յիշուած եղանակաւ պաշտպանեց եկեղեցին : Միթէ Հայաստանեայց Ս. եկեղեցին այս տեսակ աղանդներէ ու մոլորութիւններէ զգուշացնող եւ յիշեալ աղանդաւորաց եւ նմանեաց դէմ մարտնչելով Քրիստոսի սուրբ եկեղեցին պաշտպանող Ս. Հարց շաւղին՝ որ է Յիսուսի եւ առաքելոց գծածն . հետեւել եւ նորա աշակերտիլ պատուիրելովն, զՔրիստոս մոռցած եւ մոլորութիւն քարոզած լինի . 2է՞ որ այսպէս ընելով Յիսուսի եւ առաքելոց հետեւած լինի : Ի՞նչ, թողելու էին որ՝ յիշեալ աղանդաւորք ազատ եւ շքաբար հայտնելն զՔրիստոս եւ զստորագելիս նորին . . .

Անցած է ժամանակն Պարոն Շիշմանեան, գրեթէ երկու հազար տարիի մօտեցող հաւատարիմ Քրիստոնեայ ազգի մը՝ Հայոց, բրիտանեութիւն քարոզելու : Եթէ կալիս ճշմարիտ Աւետարանչի անուն

ստանալ, ո՛չ թէ այդպէս քո անուն դու անուանելով, այլ ինչպէս վերը տեսանք, ձգէ՛ քո ընտանիք եթէ ունիս, ձգէ այն ամեն հանգըստութիւններդ, ամսական թոշակդ եթէ ունիս եւ այլն, եւ գնահատալաւորեալ աշխարհը որ՝ անձանօթ չըլլալու է քեզ . եւ հոն կապանքի մէջ, քառասուն յիսուն անգամ ծեծուէ, անօթի, ծարաւ գրեթէ մերկ . բոլորովին հալածական կեանքով մը՝ չէ թէ այժմեան քարոզածիդ նման, այլ իրապէս Յիսուս Քրիստոսի սկզբանք հետեւելով քարոզէ, եւ ինչպէս յայտ է, երբ զքեզ ալ քարոզած ճշմարտութեանցդ համար կտտամահ առնեն, եւ դու բնաւ փախուստ չտաս, եւ քաջապէս վասն անուանս Տեառն Յիսուսի յանձն առնուս զմահ, ահա այն ատեն, եւ միայն այն ատեն կարծեմք պիտի լինիք ճշմարիտ Աւետարանիչ՝ յայլոց քարոզեալ : Եւ միթէ աւելի լաւ գործ մը կատարած ըլլալու համար միջոց պակասէր քեզ, քանի որ՝ այդպէս Ամերիկայի պէս հարուստ եւ զօրաւոր ազգի մը « Քրիստոսի աշակերտաց » կողմանէ զրկուած ես, ի՞նչ հարկ այսչափ երկար ձանապարհորդութեան . միթէ այդ աշխարհին մէջ չկա՞ր Աւետարանի լուսոյն կարօտ վայրենիներ, ուր ոչ երբէք քարոզուած ըլլայ Ս. Աւետարան : Եւ միթէ մինչեւ հոս ի՛վ. Պօլիս եկած ժամանակդ հարիւրներով հազարներով մարդեր չտեսար, որք Աւետարանին վրայ դադափար անգամ չուներին . ինչո՞ւ անոնց վրայ չիործեցիր Աւետարանչութեան պաշտօնդ, թերեւս կարենայիր գոնէ մէկ անձ համոզել : Բայց . . . ինչ որ է, ձգելով այդպիսի առարկութիւններն . շարունակեմք մեր քննութիւնը . այս մասին ալ առայժմ այսչափ ինչ գրելով եւ անցնելով ուրիշ կեանքու քննութեան :



### ՀԱՏՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

ՄԵՂԱԻՈՐԱՅ ՀԱՄԱՐ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՑՆ ԱՂՕԹՔԸ Ս. ԳՐՈՑ  
ՀԱՄԱՁԱՅՆ ԼԻՆԵՆՈՒՆ ՎՐԱՅ

Ժամ է արդ, այս վերջին հատուածով տետրակի 88 երեսով խօսուած «Պարոն Աւետարանչին» քարոզը քննել ու կնքել, մի հակիրճ բովանդակութեամբ։

Այս քարոզն՝ ինչպէս ամեն ընթերցողաց աչքին պիտի դարնէ, կարծուածէն աւելի եզակի է իւր տեսակին մէջ. մէկ մը որ՝ սառնաբար հարցաքննէ այդ մասին եկեղեցեաց ըրած աղօթից Ա. գրոց համաձայն լինելուն կամ չլինելուն. մէկ մ'ալ որ՝ ինքզինքը չգիտեմք ո՞ւր կարծելով ելեր «լոյ, միայն, մերկ խօսքերով» պատասխանել ճգնի։

Ահա իւր խօսքերը։ «Այն եկեղեցիներուն աղօթքները՝ որ կըլլան Աստուծոյ Հոգին անզեղ ձեռնադրուածներուն վրայ թափուելու համար, որ զանոնք ապաշխարութեան առաջնորդէ, եւ անոնց քարացեալ սրտերը փոխելով մարմնեղէն սրտեր շնորհէ անոնց որ վրկուին. Ս. գրոց համաձայն չէ՞. . . Երբէք այդպիսի օրինակ մը կամ պատուէր մը չկայ Ս. գրոց մէջ, եւ ո՛չ ալ Աստուած խոստացած է այդպիսի աղօթքներու պատասխան մը տալու. մանաւանդ որ՝ Յիսուսի Քրիստոսի վարդապետութեանը ուղղակի հակառակ է»։ Տետրակ եւրես 88, եւ երես 89 անդ՝ արգելու աղօթել այսպէս. «քանզի Յիսուս նոյն նշանաւոր աղօթքին մէջ» (ուրեմն Յիսուս շատ «աննշան աղօթքներ» ալ ըրած է. եւ դուք պէտք է անոնք զիմնայիք ցուցնելու համար թէ ոչ չէ) «չէ թէ միայն անոնց համար ազատ, հասլա անոնց խօսքովը (ոչ թէ աղօթքովը) բոլոր ինծի հաւատացողներուն համար ալ ըսած է»։ «Պարոն Աւետարանիչ» սա սոչ թէ աղօթքովը խօսքերը փակագծի մէջ առած ըլլալուդ համար բիւր շնորհակալեաց արժանի ես. ապա թէ ոչ, ինչպէս, կարելի պիտի ըլլար հասկցնել թէ՛ աղօթք ընելն արգիլած է այս նոր Աւետարանիչն եւ այդ վերոգրեալ պարբերութեամբն ասել կամի թէ՛ աղօթել պէտք չէ։ Ինչո՞ւ. Ասան զի՛ Ս. գրոց մէջ մեղաւորաց համար աղօթք ընելու օրինակ մը չիկայ, եղեր

Ասան զի՛ չար, մեղաւորներուն դարձի գալուն համար աղօթք ընելու պատուէր մը չկայ։ Եղեր։

Ասան զի՛ եթէ երբէք մէկը այդ կերպ աղօթք մ'ալ ընէ, անոր չպիտի լսէ Աստուած։ Եղեր։

Ասան զի՛ «աղօթք ընելը» մեղաւորաց համար ուղղակի հակառակ Քրիստոսի վարդապետութեանցը։ Եղեր։

Լսեցի՞ք եւ խնայե՞ք Հայոց ժողովուրդք, սա այս նորալուր քարոզ։ Ուրեմն կարող էք յետ այսօրիկ ըստ ամենայնի եւ յաղագս ամենայնի հանդիստ քննալ, եւ ամենայն անհոգութեամբ ձեր գործին ետեւէն ըլլալ, անտարբեր մնալ, մեղքի մէջ խղճուելու եզոզ եղբօրդ համար աղօթքի չլինալ. . . եւ այլն։ Զի անա ձեր նուիրական եւ սուրբ պարասկանութեանց մին՝ որ ծանր էր, որ դժուարատար էր, ձեր վրայէն վար առաւ «Անգրաշխարհեան Աւետարանիչն»։ Սակայն այս քարոզն որչափ որ ընդհանուր կերպարանք մը ունենալ կարծուի, այլ ըստ մեզ այնպէս չէ։ Ըստ որում մասնաւորապէս եւ կամ դէժ մատուցակի Հայաստանեայց Սուրբ եւ Առաքելական եկեղեցւոյ մի մաղթանքն յիշեցնել կամի «Պարոն Աւետարանիչն»։ որ Զեանագրութեան խորհուրդն մատակարարուած ժամանակ, ի դէմս Հոգւոյն Սրբոյ երգեմք, «եւ հերկեան զբանական անգաստան՝ մարմնեղէն կարծրացեալ սրտիս՝ յընդունակութիւն արգասեաց հոգեւորապէս սերմանդ եւ այլն»։ Նարեկ. բան ԼԳ. 2 համար կամ Մաշտոց 270 երես։ Ահա այդ աղօթքն մաղթելով Հայաստանեայց Ս. եկեղեցին՝ ուղղակի Յիսուսի Քրիստոսի վարդապետութեանցն հակառակ լինի եղեր. . . : Քննեմք թէ իրօք այնպէ՞ս է։

Թէ եւ զիտեմք Պարոն Աւետարանչին նպատակն թէ՛ այդ քարոզովն ինչ հասկցնել կամի. այլ՝ որովհետեւ առժամանակ մի իրեն հետեւիլ ընտրած եմք. ուստի թող ներուի մեզ այսպիսի մի ընթացք ընել, որպէս զի կամ համոզուի իւր գրածներուն ի մասին Հայ. Եկեղեցւոյ սխալ, ծուռ եւ մտորական լինիլն, ու վերադառնայ անգրէն բաղում զվճանօք ի զիրկ մօրն հասարակաց Հայիական Ս. Եկեղեցւոյ. (թէ եւ շատեր պիտի չհաւատան դատնալուն)։ Եւ կամ եթէ երբէք չհամոզուի ու չվերադառնայ. բայց լսէ մինչեւ յաւիտեան եւ դադրի զրոյարտելէ մեր անարատ Եկեղեցին։ Այս խնդրոյն քննութեան առթիւ. Հին Ատակարանին գիմելու հարկ մը չեմք տեսնար. զի զիտեմք որ «Պարոն Աւետարանչին» գործին չպիտի դայ։ Ըստ որում հոն պիտի դանամք Յովք մը որ իւր երեք ապառաժ սիրտ ունեցող այցելուաց համար Աստուծոյ հրաման ընկալաւ աղօթելու, ԽԲ. ԳԼ. 7-10 համարներն, զի անդ պիտի ընթեռնուէր Աստուծոյ այն խօսքը որ գրուած է, թէ՛ իմ Գաւիթ ծառայիս աղաչանաց համար այս աղքին վերակացու պիտի լինիմ եւ այլն։ Ասան զի հոն պիտի դանամք













նոնք ապաշխարութեան առաջնորդէ, եւ անոնց քարացեալ սրտերն  
 փոխելով մարմնեղէն » սրտեր շնորհէ անոնց ի փրկութիւն, Ս. գրոց  
 համաձայն չէ. զի « երբէք օրինակ » մը կամ պատուէր մը չկայ Ս.  
 գրոց մէջ, ոչ ալ Աստուած խոստացած է այդպիսի ազօթքներու պա-  
 տասխան մը տալու եւ այլն» : Տետրակ երես 88 :

Աստուծոյ ՊԱՏԳԱՄՆԵՐՆ ու այս Պարոն Շիշմանեանի շաղկաղ-  
 փռերք՝ անմիաբանելի հակասութեան իրական պատկեր կան եւ պի-  
 տի մնան յաւիտեան, մինչեւ դառնայ ու ապաշխարէ . . . : Մաղ-  
 թենք իրեն (Շիշմանեանի) ալ սիրտ մարմնեղէն եւ ողի նոր . . : Մաղ-  
 թենք այո, ոչ միայն Շիշմանեանի, այլ եւ բոլոր իւր նմանեացն ալ  
 որպէս զի ճանչնալով բաժանմանց երեսէն Ազգին կրած անհաշուելի  
 վնասներն՝ եւ որ աւելի մեծն ու անուելին է, տեսնալով Հայութիւնը  
 ջնջելու սպառնացող այն մտաւրուտ եւ սոսկալի վտանգն, սթափին,  
 զզջան եւ դան միանան ի զիրի Մօրն հասարակաց. անօրինակ վիշտ  
 եւ տառապանաց դէմ Աստուածային իմն հրաշիւք 1830 տարիներէ  
 ի վեր կուրծք տալով զիմացող ներողամիտ, ազատ, Առաքելական,  
 մի, սուրբ եւ կաթողիկէ Հայ եկեղեցւոյ ծոցն. եւ հոն սիրտ սրտի  
 տուած մէկ զգացմամբ ջանան վանել այն ամեն օտար յարձակումներն  
 օրհնելով Ամենասուրբ Երրորդութիւնը Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին  
 յաւիտեանս :



3352-3357

<< Ազգային գրադարան



NL0030496

<< Ազգային գրադարան



NL0030495

<< Ազգային գրադարան



NL0030494

<< Ազգային գրադարան



NL0030493

<< Ազգային գրադարան



NL0030492

<< Ազգային գրադարան



NL0030491

